



ՀԱՅԻՒԹԻՒ

1969-Դ

ՈՆԾԸ
ԻԵ ՏԱՐԻ


Ապրիլ

ԷՂՄԻԱԾԻ

ՊԱՀԾՈՎԱԿԱՆ ԱՐՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՂՄԻԱԾԻ

Դ

1969



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաղորդագրություն

Վեհափառ Հայրապետի բարոզք Փրկչի հրաշափառ սուրբ Հարուրյան տոնի առիվ Մայր տաճարում	3
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարուրյան տոնի առիվ Ամենայն Հայոց Սայրագոյն Պատրիարք և կարողիկոս, Նորին Սուրբ Օծուրյան Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և բույր եկեղեցիների նովոր պետքի միջև փոխանակված ողջույնի հիմագրերը	4
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարուրյան տոնի առիվ Ամենայն Հայոց Սայրագոյն Պատրիարք և կարողիկոս, Նորին Սուրբ Օծուրյան Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և Եղիշրապետական Արքուների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հիմագրերն ու գրուրյունները	7
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ Մայր տաճարում Փրկչի հրաշափառ Հարուրյան տոնի առիվ	22
Քրիստոս յարեաւի ի մեռելոց (Մշակումը Օհան Դուրյանի)	23
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	26
Ներքին բեմերի խորեղակցական ժողով Մայր Արքուն	28
Հ. Ճ. ԱԿՐՈՒՆԻ—Կոմիտասին հիմ	30
ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ—Ն. Լամբրոնացու «Պատարագի մեկնութիւն»-ը.	39
Օ. ԵԳԱՆԻԱՆ—Գևորգյան նեմարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն	45
Հանգիստ արձ. տ. Գրիգոր Տաճանա Գևորգյանի	48
Հանգիստ արձ. տ. Հակոբ Տաճանա Խոխոյանի	48
Մատենագիտություն «Արարատ» ամսագրի	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՉՄԻԱՅԻՆ

«ԷՇՄԻԱՅԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմանская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS,

Հանձնված է արտադրության 2/IV 1969 թ., Ստորագրված է տպագրության 13/V 1969 թ.:
Տպագրական 4 լամպ, թուղթ 60×84¹/8, պատվեր 245

Մայր Արքուն Ս. Էջմիածնի տպարան, 1969 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓՈԽ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅԻՆ ՀԾՈՑ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վագգեն Ա. Հայրապետի որոշմամբ, Մայր Աթոռ և Էջմիածնում գումարվելու է Եպիսկոպոսական ժողով հառաջիկա սեպտ. 25—հոկտ. 2-ը՝ քննարկելու համար այժմեռություն ներկապացնող մի շարք եկեղեցական հարցեր, համաձայն կազմված օրակարգի, որ հրապարակվելու է մոտ ապագային:

Սույն ժողովին մասնակցելու համար առանձին պաշտոնագրերով հրավիրված են Մեծի Տաճան Կիլիկիի կաթողիկոսը, Երուսաղեմի հայոց պատրիարքը, Կ. Պոլսու հայոց պատրիարքը՝ իրենց Աթոռների եպիսկոպոսներով, և Հայաստանյաց եկեղեցւո բոլոր եպիսկոպոսները:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

14 ապրիլ 1969 թ.,
Ա. Էջմիածին





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ
ՀՐԱԺԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1969 թ. ապրիլի 6)

Յանուան Հօր և Որդու և Հոգոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի հավատացյալ ժողովորդ,

Ցնծացեք և ուրախ եղեք զի այսօր տոն է սուրբ Հարության:

Այսօր, Միածնակչ Մայր տաճարի զանգակաները կավետեն մեր Փրկչին Քրիստոսի Հարությունը՝ հայոց բոլոր եկեղեցիներուն, հայ ժողովորդի բոլոր զավակներուն ի Հայաստան և ի ափյուս աշխարհի:

Այսօր, գարնան այս լուսարացին, երբ արևին կենդանարար լուսը այնիքան առատ կիշճե համայն աշխարհի վրա, ուրախ լուս մը, նույնքան առատ և կենդանարար կրաշխալի մեր հոգիներու աշխարհին:

Այդ այն լուսն է՝ որ մեր նախնիք կոչեցին «իմանալի լոյս»: Այդ այն լուսն է՝ որ բեղմնավորեց և փառքով լեցուց հայ ազգի կյանքն ու պատմոթյունը ամբողջ: Այդ այն լուսն է՝ որ նովմիսկ մահը դարձուց «իմացեալ» և ճանապարհ բացակ դեպի հավերժություն:

Զի Հիսուս «մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Զավակներ Մեր հարազատ, Զատիկ է այսօր, ցնծացեք և ուրախ եղեք: Միշտ արթուն ու լավատես, միշտ վատահ ձեր սեփական ուժերուն, ձեր կյանքի ճանապարհին վառ պահեցեք ջանք նախնաց հավատքին և լուսը հայ հոգին: Ուր ալ գտնվիք, ձեր հայրենի հողի կամ հեռու ափերու վրա, մնացեք հաւատարիմ սուրբ Լուսավորչի և սուրբ Մեսրոպի տեսիլքներուն, մնացեք հավատարիմ հայրենի հողին, մեր արդի կյանքին ու գործին, և ապագային: Ել

ինչ ալ պատահի, անսասան, մեկ ու անբաժան, ամենայն հայոց սուրբ Էջմիածինի օրինության ներքեւ:

Այս, Զատիկ է պատօր, և օր Է՛ արդար ու համարձակ խոսքի, ի խնդիր մեր սուրբ եկեղեցվու և ժողովուրդի կյանքի խաղաղության, որ կրօնա կենսագործվի միմիայն եղբայրական սիրով և միության ոգիով, պահպանումովը մեր նվիրապետության դարավոր կազու ու կանոնին և գիտակցությամբը մեր ազգային մնացուն հիմնական շահերուն:

Իբրև Հայոց Հայրապետ, Մեր սեպուհ պարտքը կնկատենք, անդադար անսագանգ հնչեցնել, հազար խոսքերով, հազար ձևերով, լսելի դարձնելու համար մեր օրերու հոգևոր-ազգային կյանքի գերագույն ճշմարտությունը՝ թե հայության միակ ապահով խարիսխը աստվածակառուց սուրբ Էջմիածինը է և մայր հողը հայրենի: Հայաստան, հայ ժողովորդ, հայոց պատմություն իրարմե անբաժան են, և միասին անբաժան են՝ ու Էջմիածնեն:

Սփյուռքի Մեր զավակները պիտի մնան պեճքան ատեն հայ, և այնքան հայ, ինչքան կարողանան իրենց հոգիի թելերով կապվի հավիտենական մայր Հայաստանին և հայաստանցի ժողովուրդին, և մանավանդ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, որ բազմադարյան գերագույն խորհրդանշանն է և երաշխիքը՝ հայոց կրոնական գիտակցության և ազգային միասնության:

Հանախ, ծանր ապրումներ կճնշեն Մեր սրտին վրա, ի տես այն կենտրոնախուս ձգտումներուն և պառակտումներուն որոնք հառաջ եկած են սփյուռքի մեր եկեղեցական կյանքնեն ներս: Հանախ կճմանինք այն բժշկին, որ ձեռքը դրած հիվանդի բազկերակին, մտահոգ կիտևնի անոր մարմնույն մեջ բոյն դրած բայբայիշ զարգացումներուն, և կիորդն դիմել ամեն հնարքի, գորացնելու համար հիվանդի մարմնույն դիմադրական ովթերը, անոր ինքնապաշտպանությունը: Եվ բժշկին հման՝ երբեմն հոռեսնեն ենք ու անզոր, երբեմն հուսադրված ու լավատես, սակայն միշտ մտահոգ: Կտարկինք նաև խորհելու, թե սփյուռքահայ կյանքի ընդհանուր տեղատվության հիվանդագին դրսնորումներնեն մին, կիանդիսանան բաժանումները Մայր Աթոռուն:

Սուրբ Զատիկի այս նվիրական պահուն, երբ կիառաքամնենք ովթերը բարիին և հայությունը արդարության, երբ մեր հոգիներնեն ներս կճառագլթեն պայծառ զգացումները սիրու և հաշտության, սուրբ Էջմիածնի մայրական հրավերը կրերենք Մեր բոլոր պանդոխտ զավակներուն, որ հեռու մնան պառակտումներնեն, որ ձերբազավին ամեն տեսակի թյուր հմացություններեն, և մեկ սիրու մեկ հոգի, մտածեն ու գործեն ամրացնելու իրենց հոգևոր միությունը, մեկ ու անբաժան եկեղեցիով, մեկ ու անբաժան նվիրապետությամբ, մեկ ու անբաժան Հայոց ընդհանրական Հայրապետությամբ:

Սյապես է միայն, որ բոլոր հայերը, եկեղեցվու սպասավորներ թե հավատացյալներ, արժանի պիտի ըլլան խաղաղ ու հաշու խղճով դիմավորելու մեր Տիրոջ և Փրկչի Հարության ավետիսը:

Բավական չէ, լոկ խոսքով տոնախմբել Հարությունը Փրկչին մեր Քրիստոսի, այլ մանավանդ մեր սրտի, հոգիի, իրավ ապրումներով, սիրու և խաղաղության կենդանի գործով: Չի խոսքը առանց գործի կմնա մեռյալ:

Մենք կիավատանք թե բոյն հայ ժողովուրդը, անկախ այլ կարգի ըմբռնումներեն, Մեզ քաջ կիասկնա: Կիասկնա Մեր խոռվքը, Մեր իղձը արդար, և իր հոգիով ովատի կուգա պատօր ի լույս Էջմիածնին:

Այս, Մեր սիրու կվկայէ թե այս տոնական սրբազն ժամին, այստեղ ս. Էջմիածնի այս կամարներուն տակ, հաւաքված է մեր ազգը համայն, անխըտիր, իր բովանդակ հոգիով՝ ամբողջ ու անբաժան:


Արդ, դուն ժողովուրդ հայոց, դուն «հօստ փոքրիկ» անգին, աննման; հազիվ փրկված պատմության մեծ արհավիրքներն, և վերջապես հասած՝ խաղաղ ու անվտանգ կյանքի մը ափին, դուն թևերդ երկինք տարածած, աղոթե այսօր, և մենք ալ քեզի նետ, որ Հարության լուսը հաղթէ խավարին, մեգին, բարին՝ չար ձեռքին, արդարությունը՝ սուտին, կեղծիքին, ազատությունը՝ բընության դավին, խաղաղության երկնառաք ոգին՝ պատերազմի մահման ովմերուն, զի «յարեա Քրիստոս» արեգակն արդար:

Սքանչելագործ տեսիլքը՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի, խորհուրդը՝ քրիստոսակերտ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և ոգեղինացած պատմությունը հայոց բազմաշարչար բայց վերածնած ժողովուրդի, թող հավետ մնան ձեզի ամենուդ ներշնչարան և առաջնորդող լուս:

Խաղաղություն աշխարհին համայն, եղբայրություն ազգերուն բոլոր, սեր և միություն մեր եկեղեցին, Մեր զավակներուն ամեն:

Արդ, սիրելիք Մեր «սրբեցք ի բաց զմին խմորն, զի եղիշիք նոր զանգուած որպէս երդ անխմորք. բանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս»:

Ձեզ և մեզ մեծ ավետիս, Քրիստոս հարյավ ի մեռելոց: Ամեն:





ՓՐԿՉԻ ՀՐԱՇՏՎԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ
 ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
 ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ
 ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ
 ՔՈՒՅՑՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ
 ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՑՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
 ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
Պ.Վ.ՂՈՍ Զ Պ.Պ.Ի.Ն (Հռոմ),

Կոստանդնուպոլիսի հունաց Տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
Ա.Թ.Ե.Ն.Ա.Գ.Ո.Ր.Ա.Ս.Ի.Ն (Ստամբուլ),

Մուկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք, Նորին Սրբություն
Ա.Լ.Ե.Ք.Ս.Ի.Ի.Ն (Մուկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Սրբություն
Կ.Ո.Ն.Ս.Ա.Ն.Տ.Ի.Ն.Ի.Ն (Ալեքսանդրիա),

Դպտի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Ա.Բ.Ո.Ի.Ն.Ա.Կ.Յ.Ո.Ի.Ր.Ե.Ղ.Զ.-Ի.Ն (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց պատրիարք, Նորին Սրբություն
Բ.Ե.Ն.Ե.Դ.Ի.Կ.Տ.Ո.Ս.Ի.Ն (Երուսաղեմ),

Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
Թ.Ե.Ո.Դ.Ո.Ս.Ի.Ո.Ս.Զ.-Ի.Ն (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
Մ.Ա.Ք.Ս.Ի.Մ.Ո.Ս.Ե.-Ի.Ն (Դամասկոս),

Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի պատրիարք, Նորին
 Սրբություն **Ի.Գ.Ն.Ա.Տ.Ի.Ո.Ս.Հ.Ա.Կ.Ո.Բ.Գ.-Ի.Ն** (Դամասկոս),

Համայն Եթովպիայի պատրիարք, Նորին Սրբություն
Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ի Ն (Աղիս-Աքելա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ո Ւ Կ Ե Ն Ա - Ի Ն (Կերպար).

Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
Ե Փ Ր Ե Մ Բ - Ի Ն (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Ժ Ո Ւ Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բուխարեստ),

Բուզդար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Կ Ի Ր Ի Լ Ի Ն (Սոֆիա),

Լիբանանի մանորիտ պատրիարք, Նորին Սրբություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Զ Ի Ա Դ Ի Ն (Բեյրութ),

Քենտրոնական արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Սրբություն դոկտ. Մ Ա Յ Ֆ Լ Ռ Ե Մ Զ Ի Ի Ի Ն
(Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
Հ Ե Ր Ո Ւ Ն Ի Մ Ո Ս Ի Ն (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի պատրիարք, Նորին Սրբություն
Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),

Համայն Ալբանիայի և Տիրանի և Տուրեստի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
Դ Ա Մ Ի Ա Ն Ո Ս Ի Ն (Տիրանա),

Վարչավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
Ս Տ Ե Ֆ Ա Ն Ի Ն (Վարչավա),

Պրագայի և համայն Չեխովալովակիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
Դ Ո Ր Ո Ֆ Ե Յ Ի Ն (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Պ Ա Թ Ա Ն Ի Ն (Բեյրութ),

Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Սրբություն
Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Կիպրոսիա)

Նորին Ամենապատվություն կարդինալ
Ա Ղ Ա Զ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վատիկան),

Եկեղեցիների համաշխարհային խրոհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. Է. Կ. Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),

Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ
Լ Ո Ր Ի Ս Տ Ո Ն Լ Ե Վ Ի Ն Գ Ս Տ Ո Ն Ս Ք Ե Յ Ֆ ե կ ի ս կ ո պ ո ս ի ն
(Նյու-Յորք),

Լատվիական ՍՍՀ ավետարամական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Սրբազնություն Գ Ո Ւ Ս Տ Ա Վ Տ Ո Ւ Ր Ս Ի Ն (Ռիգա),

Էւստոնական ՍՍՀ ավետարանական-լույսերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Սրբազնություն Յ Ա Ն Կ Ի Յ Վ Ի Տ Ի Ն (Տալլին),

Միջին Արևելքի ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ւ Յ Ա Ն Ի Ն
(Բելյութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուսառող

Հ. Լ Ի Ն Ո Ւ Ս Կ Ո Պ Պ Ի Ե Լ Լ Ի Ի Ն (Երուսալիմ),

ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ,
Գերապատիկ հայր Ռ Ո Ւ Բ Ե Ն Մ Յ Ո Ւ Լ Լ Ե Ր Ի Ն (Նյու-Յորք),

Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ Շ Ա Ռ Լ Ռ Յ Ո Ւ Պ Ի Ն (Մոնակո),

Մխիթարյան ուստի աբբահայր, Գերհարգելի հայր

Մ Ե Ս Ր Ո Պ Վարդապետ Հ Ա Պ Ո Զ Յ Ա Ն Ի Ն (Վիեննա),

Վերապատվելի Հ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ե Լ Վ Ա Ծ Յ Ա Ն Ի Ն (Մարտել):

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց».

Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսով
Մեր շնորհավորանքներն ու եղբայրական ողջովաները կհղենք Ձերդ Սրբության՝
մաղթելով Ձեզ երկար և քաջառողջ կյանք՝ շարունակելու Ձեր քրիստոնեական
լուսավոր առաքելությունը երկրի վրա, ի գլուխ ձեր մեծ և սուրբ եկեղեցվո:

Այսօր Մեր աղոթքները կմիացնենք Ձեր Սրբության աղոթքներուն, որ-
պեսզի Քրիստոսի հարության շնորհները լուսավորնեն աշխարհը համայն և
ճանապարհը ժողովուրդներու կյանքին, ի խնդիր արդարության և խաղա-
ղության հաստատման երկրի վրա:

Հարուցյալ Փրկչի շնորհներով թող լուն պատերազմները և թող եղբայ-
րությունը հավիտյան հաստատվի մարդոց և ժողովուրդներու միջև:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐք ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Սիրելի եղբայր ի Քրիստոս,

Բարին Աստված մի անգամ ևս ատիթ է շնորհում մեզ տոնելու մեր Փրկիչ
և Տեր Հիսուս Քրիստոսի Հարության փառավոր տոնը և այբախտով հիշատա-
կելու փրկության և սրբագործության իր աստվածային ծրագրի կենտրոնա-
կան եղելությունը:

Գոհության և ուրախության զգացումները լցնում են մեր սրտերը, և Մենք,
Մեր եղբայրական սիրուց մղված, ցանկանում ենք բաժանել այդ զգացումնե-
րը Ձերդ Սրբության հետ և Ձեզ հայտնել աղոթքի զրությանը ապավինած

Մեր այն հույսը,թե «ապօք է զոր արար Տէր». կիխնի Զեզ համար, ձեր եկեղեցու նվիրապեսության, հոգևոր դասի և հավատացյալ ժողովրդի համար հոգեկան միախառության և ներքին ուրախության մի օր:

Քրիստոսի հարության խորհրդի մեջ հայտնված Աստուծո զորության մասին խորհեղով՝ մենք վերստին մտաքերում ենք, որ այդ Քրիստոսն է, մեր բոլորի քարոզած Քրիստոսը, որը սուրբ Հոգու միջոցով «հավատքի, հոյսի և սիրո միության մեջ կանչեց որ հավաքեց նոր դաշինքի ժողովրդին, որ ինքը՝ եկեղեցին է», և որ նրա գործը պետք է առաջ ներանա մենչև իր ավարտը՝ նրա վերադարձի ժամանակ: Երկու հազար տարի շարունակ այդ Հոգին խոսեց եկեղեցիներին. նա այդ շարունակում է անել և այսօր: Մեր Տիրոց և հարուցալ Փրկչի նկատմամբ ունեցած մեր հավատարմությունը մեզնից պահանջամ է, որ հաստատակամորեն շարունակենք պահպանել և խորացնել այն ամենը, ինչ որ սուրբ Հոգին անցյալում ասել է եկեղեցում՝ առաջնորդելու և ոգեշնչելու համար նրան. սակայն այդ նույն հավատարմությունը մեզնից պահանջում է նաև, որ մենք տևապես ուշադիր լինենք լսելու նրա ձայնը այսօր, ինչպես պարտավոր ենք ուշադիր լինել և վաղը:

Սուրբ Հոգու նկատմամբ այդ հնազանդությունը թույլ կտա մեզ, որ մենք, որ հավատքի և հոգևոր կյանքի ներքին այնքան աերտ կապերով արդեն միացած ենք իրար, առավել և խորացնենք արդեն իսկ մեր ունեցած այդ միության ճշանակությունն ու պահանջները՝ առավելագույն շափով արժենորելով այն:

Մենք արդեն արտահայտում ենք այդ միությունը մեր փրկության խորհրդների միասնական կատարումով, տա՛ Աստված, որ շուտով մենք կարողանանք նաև միևնույն օրը տոնել մեր Տիրոց Հարության փառավոր տոնը:

Ի սրտե հայտնում ենք հարուցալ Տիրոջը, որ իր զատկական շնորհներն առատորեն սփոխ Զերդ Սրբության ու նրա եկեղեցու վրա, և վերստին հայտնում ենք Զեզ մեր ամբողջ եղբայրական սերը ի Քրիստոս, որը սկիզբն է և կատարածը, աղբյուրն է և վահճանը մեր բոլոր ջանքերի:

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

Վատիկան

*
* *

Այսօր ամեն ոք լեցված է լոյսով. երկինք և երկիր և բոլոր նրանքում են, որ Քրիստոս՝ մեր ճշմարիտ Տէրը, մահվան հաղթեց նր մահվամբ և դժոխքը գերեց, արկի նման բարձրացավ՝ աստվածացնելով մարդկային բնությունը և բոլոր նրանց, որոնք հավատում են և հոյս ունեն նր վրա մահվանից կյանք և կյանքից՝ երկինք առաջնորդելու:

Կենարար և փառավորյալ Հարությամբ մեր Տիրոց, մենք նրանքում ենք սրտանց, տոնախմբում ենք հատկապես մեր ժողովրդի հետ և եղբայրական այս նամակը հղում ենք Զերդ սիրելի Սրբությանը այս սուրբ և մեծ տոնի առիթով՝ հետևելով սուրբ և հին ավանդություններին, փոխանցելով Զեզ մեր սուրբ համբույրը, և աղոթում ենք, որ մեծն Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսը, որ հարյավ ի մեռելոց, պահի Զեր առողջությունը և պարգևի Զեզ երկար կյանք՝ հուրախություն հոգևոր հոտիդ, որ Զեր իմաստությանն է հանձնելու, և փառքի համար նրա սուրբ և բարձր անվան:

Քրիստոս հարյավ, սիրեցյալ եղբայր:

Զերդ Սրբությանը ողջագործվում ենք հարուցյալ Քրիստոսով և մնում ենք
եղբայրական սիրով և մասնավոր հարգանքով:

ԱԹԵՆԱԴՈՐԱՍ

Տիեզերական պատրիարք Բունաց

Սուամբուլ

* * *

Հարության տոնի ուրախությունը ամենամեծ ուրախությունն է, քանզի
այն ոգեշնչում է մեզ առաջին իսկ պահին, եթե հրեշտակները սկսում են եր-
գել Հարության սաղմոսը երկնքում:

Գերազույն այդ ուրախությամբ լեցուն ամենայն սիրով ողջունում եմ Զերդ
Սրբությունը և աղոթում առ հարուցյալ Քրիստոս, որ նա լուսավորի Զեր
կյանքի ուժին և օգնական լինի Զեզ Աստծո սուրբ եկեղեցու ճառայության
գործում:

Հայցելով Զեր աղոթքները, մնամ եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՄԱՐԴՈՒ

Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

Սուլբա

* * *

Զերդ Սրբություն, շատ սիրելի Եղբայր մեր,

Այս, Էմմառնի աշակերտների նման Մենք ևս գոչում ենք. «Քրիստոս
յարեա ի մեռելոց». և արդար յարեա:

Մեր հոգին լի այս մեծ օրվա լուսու և Տոների Տոնը հանդիսացող սուրբ
Հարության ցնծությամբ սոգորութած՝ Զերդ Սրբությանը հնում ենք Մեր սրտա-
գին շնորհակալությունները Զեր զատկական պատվական ուղերձի առթիվ,
Մեր ջերմագին բարեմաղթություններով և այն ցանկությամբ, որ հարուցալ
Փրկիչը Զեզ, ինչպես նաև Հայաստանյաց քոյլ եկեղեցու եպիսկոպոսական
դասին և բարեպաշտ ժողովրդին բաշխի իր լուսաշող Հարության առաւա-
րուի շնորհները:

Խնդրելով Զեզ Զեր աղոթքներում հիշել իմ խոնարհ անձը՝ անկեղծ ող-
ջագործումով մնամ Զեր եղբայրը ի Քրիստոս:

ԹԵՌՈՌՈՒՌՈՍ Զ

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

Դամասկոս

* * *

Շատ սիրելի և մեծարգո Եղբայր,

Սուրբ Զատկի փառավոր տոնի առթիվ ուրախ ենք Զերդ Սրբության հետ
փոխանակելու ամենամեծ և բարի մաղթանքներ, ուրախ ենք մասնավանդ հաս-
տատելու մեր միասնական հավատքն ու միասնական սերը մեր Փրկիչ և Տեր
Հիսուս Քրիստոսի հանդեա, որի հրաշավառ Հարությունն ենք տոնում մեռել-
ներից: Զատկական պրազան արարողությունների ջերմեռանդ կատարումով
մեր հրճվանքն ենք արտահայտում Զերդ Սրբությանը՝ կրկնելով. «Քրիստոս
յարեա ի մեռելոց»:

Սեր սրտագին աղոթքները միացնելով Ձեր աղոթքներին՝ հայցում ենք Փրկչից, որ նր խաղաղությունը, նր արդարությունն ու սերը հաստատի բոլոր մարդկանց, բոլոր եկեղեցիների և բոլոր ժողովորդների միջև:

Նղբայրական սիրով ի Քրիստո՝

ՄԱՐՍԻՆՈՍ Ե

Պատրիարք ԱՅՆԻՈՒԹ և համայն Արևելքի

Դամասկոս

* * *

Շնորհակալ ենք Ձերդ Սրբության անկեղծ շնորհավորանքների և բարի ցանկությունների համար մեր Տիրոջ և Փրկչի փառավոր Հարության սունի առքիվ: Երբ շնորհավորում ենք այս սունի առքիվ Ձերդ Սրբությանը, միանում ենք Ձեր աղոթքներին քրիստոնության փառքին և խաղաղության հաստատման համար աշխարհի վրա:

Թող հարուցյալն Աստված պարգևի Ձերդ Սրբության առողջություն, և ձեր սիրելի եկեղեցուն և ժողովորդին ամենայն հաջողություն:

ԻԳՆԱՏԻՈՆ ՀԱԿՈԲ Գ

Սիրիայի օրթոդոքս եկեղեցու
և համայն Արևելքի պատրիարք

Դամասկոս

* * *

Սեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի Հարության լուսապայծառ և սուրբ օրվա առքիվ, սրբազն և եղբայրական պարտք ենք համարում Ձերդ Սրբությանը հայտնելու անձամբ Մեր և Մեր գլխավորած Աղեքսանդրիայի և Եկեղեցու սունական շնորհավորանքները, աղոթելով աշխարհի Փրկչին, որպեսզի հովանավորի և պահպանի Ձերդ Սրբությանը քաջառողջության մեջ և արժանացնի երկար տարիներ կենարար Հարության սունը տոնելու և Ձեզ վստահված եկեղեցին զորացնի՝ աստվածահան և անբասիր Ձեր հովվավետությամբ:

Այս առքիվ կրկին Տիրոջով ողջագործում ենք Ձեզ՝ ավետելով. «Քրիստոս յարեա»:

Մնամք եղբայրական սիրով Ձերդ Սրբության սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝

ՆԻԿՈՂԱՅՈՍ

Պատրիարք Աղեքսանդրիայի

Աղեքսանդրիա

* * *

Ձերմորեն գրկում եմ Ձերդ Սրբությունը և Ձեզ հետ միասին բացականչում.

«Քրիստոս յարեա ի մեռելոց»:

Մեծ է Քրիստոսի Հարության երշամկությունը մարդկանց համար, քանզի այն բերում է իր հետ հաճություն և խաղաղություն բոլոր մարդկանց:

Տուր աշխարհին խաղաղություն, քանզի ավելի լավ է մի կտոր չոր հաց, բայց խաղաղությամբ, քան բարիքներով լեցում տուն, բայց խոռվություններով լի:

Սիրով ի Քրիստոս՝

ԵՓՌԵԾ' Բ

Կաթողիկոս-պատրիարք համայն Վրաստանի

Թրիլիսի

*
* *

Մեր Տիրոջ սուրբ Հարությունը տոնախմբելու համար ձեր եկեղեցու հոգեվոր դասի և հավատացյալ ժողովրդի հետ, եղբայրական ջերմ մտածումներով և զգացումներով Զերդ Սրբությանն ենք ողջում մեր քրիստոնեական բարի մաղթանքները: Աղոթում ենք առ Փրկիչն մեր Հիսոս Քրիստոս, որպեսզի նա շնորհի նր ողորմությունն ու անսահման սերը բոլոր քրիստոնյաներին և համայն աշխարհին՝ խաղաղ ու եղբայրական սիրո և միության մեջ ապրելու համար:

Ողջագուրում ենք Զերդ Եղբայրական սիրով՝

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ

Պատրիարք Ռումինիայի

Բոխարեստ

*
* *

Հարգանք և սիրով ի Քրիստոս շնորհավորում ենք Զերդ Սրբությունը, սուրբ Հարության տոնի առիթով:

Աղոթող ենք առ Աստված, որպեսզի Հարուցյալը շնորհե Զերդ Սրբությանը քաջառողջություն և կորով, ինչպես և բեղմնավոր գործումնեության բազում տարիներ՝ ի փառ քրիստոնեական եկեղեցիների միասնության: Թող Տիրոջ շնորհիվ բարի կամք հաստատվի բոլոր մարդկանց միջև և խաղաղություն տիրի համայն աշխարհում:

Զերդ Սրբության նվիրյալ եղբայր ի Քրիստոս՝

ԿԻՐԻԼ

Պատրիարք Բողդարիայի

Սոֆիա

*
* *

«Զիսուս խնդրեք զնազովեցի զիսչեցեալն, յարեաւ» (Մարկ. 16. 6):

Սյս ուրախալի բառերը եղան առաջին խոսքերը համեստ կանանց ուղլված, երբ նրանք եկան «առաջին օրը շաբաթվան» օճելու Հիսուսի մարմինը, որին տեսել էին խաչված: Նույն ուրախալի բառերով, սիրեցյալ Եղբայր, ողջունում ենք Զերդ, Հարության տոնի առթիվ:

Հիսուս նազովեցի շարունակում է խաչվել մեղավոր մարդկանց խավար գործերով: Դեռևս ամեն տեղ, բոլոր հավատացյալների օրերում, հույսի կրակը տակալին բոցավառում է և նրա աշակերտները փնտրում են նրան: «Մեք ակն ունեաք թէ նա իցէ որ փրկելոցն էր» աշխարհը (Ղուկ. 24. 21):

Նրանց հավատարմության մեջ, նրանց փնտրութը վարձատրվեց և նրանք լսեցին ավետիքը հրեշտակի. «Ձարեա»: Նրանք լսեցին նաև Տիրոց ողջունը իր առաջին աշակերտներին. «Ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս հայր իմ, և ես առաքեմ զձեզ» (Հովհ. 20. 21):

Տևական առաքելությունն է այն աշխարհի վրա նրանց համար, որոնք հավատում են Քրիստոսի հարության և նրա զրորժյանը՝ վամելու համար խավարի գործերը: Նաև ճշմարտությունը այս հավատքի պատճառ է, որ մենք ողջունում ենք Ձեզ, սիրեցյալ Եղբայր, և աղոթում, որ ամենական Աստված առաստորեն օրինի Ձերդ Սրբությանը և բոլոր հավատացյալները ձեր եկեղեցու և դարձնի մեզ բոլորս իր խաղաղության և սիրո համար գործիքներ:

Եղբայրական սիրով, Հարության ուրախության առթիվ, մնամ շատ անկեղծ եղբայր ի Քրիստոս Հիսոս Տերն մեր՝

ՄԱՅՐԻ, ՌԵՄԶԻ

**Արքեպիսկոպոս Քենտրոնի, Եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ համայն Անգլիայի**

Լուսուն

* * *

Ձերդ Սրբություն,

Մեր Տիրոց հրաշափառ Հարության տոնի առթիվ, երբ մենք երգում ենք՝ ասելով, թե «տոնում ենք մահվան մահը, Համեսեսի անկումը, մի այլ՝ հավիտենական կյանքի սկիզբը և, խայտալով, գովերգում ենք Նրան, որը պատճառն է, միակ օրինայի մեր հայրերի Աստվածը՝ Հիսոս Քրիստոս», Մենք զգում ենք, թե ինչպես առավել սերտորեն միանում ենք Ձեզ մեռ, ինչպես և բոլոր նրանց, ովքեր դափնանում են մեր Փրկչի անունը և ընդունում մահվան վրա Նրա տարած փառավոր հաղթահակը: Ահա թե ինչո՞ւ առավել մեծ սիրով և մի առանձին պատվով է, որ կցանկանայինք հոգել Ձեզ և Ձեր միջոցով՝ նաև Ձեր ամրող հոգնոր դասին ու բարեպաշտ ժողովրդին այս մեծ և հրաշալի տոնի բերկրալից ողջունը՝ Քրիստոս յարեւ ի մեռելոց: Եվ, արդարն, հարություն առնելով մեռելներից, մինչ երկնքում, երկրի վրա և երկրի տակ եղողները զմայլահար նայում էին Նրան, նա մեզ տվեց նոր կյանքը:

Մայրեկով, շատ սիրելի Եղբայր Մեր, որ հետզիւտե ավելի մասնակից դառնանք մեր Տիրոց Հարությանը, սիրով ողջագուրում եմ Ձեզ ի Քրիստոս:

ՀԵՌՈՆԻՄՈՒ

Արքեպիսկոպոս Արքենքի և համայն Հունաստանի

Արքենք

* * *

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Մեր Տեր Հիսոս Քրիստոսը իր մահվամբ մահը ժխտեց և հրաշափառ Հարությամբ համակեց երշանկությամբ սրտերը բոլոր մարդկանց:

Այս ուրախությամբ համակված աղոթում ենք, որ Տերը պարգևի Ձեզ, ձեր եկեղեցուն, հոգնոր դասին և համայն հավատացյալ ժողովրդին երշանիլ տարիներ:

Եղբայրաբար ողջունում ենք Ձեզ և մնում Ձերդ Սրբության սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝

ՀԵՐՄԱՆ
Պատրիարք համայն Սերբիայի

Բեղրամ

* * *

Զատկական սոների ուրախությամբ համակված սրտագինս ողջունում են Ձերդ Սրբությանը Քրիստոսի լուսաշող Հարության առիթով, անձամբ իսկ կողմից և մեր եկեղեցու ու համայն հավատացյալ ժողովորի կողմից:

Թող հարուցյալ Քրիստոսը երջանկություն և խաղաղություն պարգևի համայն աշխարհին: Թող Քրիստոսի խաղաղության պատգամը լուսավորի տիեզերքի բոլոր ծայրերը:

Սրտագինս աղոթում եմ, որ Տերը զորացնի Ձեր ուժերը՝ ծառայելու հետագայում էլ Քրիստոսի եկեղեցուն՝ հուրախություն և ի միավորություն հավատացյալների:

ՍՏԵՖԱՆ

Միտրոպոլիտ Վարչավայի և համայն Լեհաստանի

Վարչավայ

*
* *

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Ամրող սրտով ջերմապես շնորհավորում և ողջունում ենք Ձերդ Սրբությանը Քրիստոսի Հարության պայծառ սոնի առթիվ:

Թող հարության և խաղաղության երկնային ավետիսով ամենակալ Սատվածը օրինի քրիստոնեաների համատեղ շանքերը՝ միավորվելու Քրիստոս Հովվապետի հովանու ներքո՝ սոնելու համար հրաշափառ Հարության սոնը՝ սուրբ Զատիկը:

Աղոթելով Ձերդ Սրբության և ձեր եկեղեցու բարօրության և պայծառության համար, մնամ միշտ սիրով՝

ԴՈՐՈՅԵՑ

Միտրոպոլիտ Պրագայի և համայն Զեխտպվակիայի

Պրագա

*
* *

Վեհափառ Տեր,

Հիսուսի հրաշափառ Հարության առթիվ կիսներեմ, որ ընդունիք եղբայրական ջերմ մաղթանքներս:

Աղոթող եմ, որ մահվան վրա մեր աստվածային Փրկչին հաղթանակը, որով խաղաղությունը վերահաստատվեցավ երկնքի և երկրի միջն, մղե մարդկությունը փնտրելու միշտ ճշմարիտ խաղաղությունը քրիստոնեական հագատքի սկզբունքներուն ապրումին մնչ:

Թող ամենաբարին Աստված պարգևն Զեզի ովք և կարողություն՝ շարունակելու համար ափումը այդ սկզբունքներուն, մեր սիրելի հայրենիքին մեջ, որպեսզի ան հարատևորեն զարգանա և առաջդիմե:

Սովորեն կօգտվիմ խորին շնորհակալությունն հայտնելու Զեր «Կոնդակ-ներու, քարոզներու, ճառերու և նամակներու» Բ հասորեն ինձի ընծայած օրինակին, ինչպես նաև Կոմիտաս վարդապետին հարյուրամյակին առթիվ հրատարակած կոնդակին համար:

Հանեցեք, Վեհափառ Տեր, շնորհիլ եղբայրական սիրո ջերմ և հարգալիր ողջուններս:

ԽԳԽԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ ՊԱԹԱՆՅԱՆ
Պատրիարք կաթողիկէն հայոց

Բերութ

* * *

Զերդ Սրբություն,

Շնորհակալությունն զատկական Զեր սիրավիր ուղերձի համար: Այս առթիվ Զերդ Սրբությանը ներկայացնում եմ քաջառողջության և հաջողության իմ բարեմաղթությունները և աղոթում, որ հարուցյալ Փրկչի լուսն ու խաղաղությունը տարածվեն համայն աշխարհի և բոլոր եկեղեցիների վրա:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Վատիկան

* * *

Երբ տոնախամբում ենք փառավոր տոնը Հարության մեր Տիրոջ և Փրկչի Հիսուսի Քրիստոսի, ողջունում ենք Զերդ Սրբության՝ եպիսկոպոսական եկեղեցու անունով:

Սուրբն Հովհաննես Դամասկացին մեզ ճշմարտապես հիշեցնում է, որ աշխարհի գորությունները անկարող եղան խափանել Տիրոջ գորությանը, երբ նա գերեզմանից դուրս եկավ, շնորհելով իր խաղաղությունը բոլորին: Քրիստոսի բերած խաղաղությունը այժմ առաջնորդում է բոլոր քրիստոնյաներին դեպի տեսանելի եղբայրություն, որ իր կամքն է իր ընտրյալ ժողովրդի համար:

Կամնդրենք Զեզ, պատվական Եղբայր, միանալ մեր աղոթքներին՝ Զատկվա տոնի առթիվ, որպեսզի Տիրոջմով զորանան մեր ձեռքերը, որոնք սրբազն գործեր են կատարում նրա փառքին համար:

Ամենայն բարի մաղթանք, աղոթք՝ Զեր քաջառողջության և հաջողության, ինչպես նաև՝ ձեր մեծ եկեղեցու և ժողովրդի համար:

Զեր եղբայրն ի Քրիստոս՝

ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՑՖ
Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոս

Նյու-Յորք

* * *

Չերդ Սրբություն,

Համելի պարտականություն ունիմ Չերդ Սրբությանը նղելու Նորին Սրբություն Պավլոս Զ պատի ներփակ նամակը:

Օգտվելով այս որախ առիթից, խնդրում եմ Չերդ Սրբությանը, որ Զատկի սուրբ տոների առթիվ բարեհաճի ընդունել իմ լավագույն բարեմաղթությունները և հարգալից սիրո իմ ամենաշերմ զգացումները ի Քրիստոս:

Ժ. Գ. Մ. ՎԻԼԱԾԲՐԱՆԴՈՒ
Քարտուղար Քրիստոնեական Եկեղեցիների
միության դիվանի

Վատիկան

* * *

Չերդ Սրբություն,

«Քրիստոս յարեա ի մեռելոց».

Թող կենդանի Քրիստոսը շարունակի պայծառացնել և զորացնել մեր եկեղեցիները:

Չերմագին ողջովուներով՝

ԲԼԵՅԿ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

Ժմն

* * *

Վեհափառ Տեր,

«Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» կողչեն վերստին մեր սրտերը ցնծագին, Փրկչին հարության պայծառ հովանով առկցուն, որ ահա կթրթուա մումերուն հետ հալկական ճրագալուցին:

«Այսօր յարեա ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր. քեզ աւետիք խնդրութեան, հարսն ի յերկրէ՝ եկեղեցի». այս է նաև մեր երգն հաղթական, լամբրոնյան հոգեջուն շարականին լուսով օծուն, որ անուշ խունկին հետ կրարձանա մեր տաճարներեն, ներդաշնակ ու միահոգի:


Սուրբ եկեղեցվո մշտնշենավոր հաղթանակին գրավականն է արդարն հարությունը Փրկչին, որ զերդ ծաղիկ անթառամ, ամեն գարնաճ՝ կու գա բողբոշիլ մեր հոգիներուն մեջ, որպես խորհրդանիշ հավերժության, գերբնական ներշնչումներով ոգեղինացներու երկրավոր պանդիստությունը բոլոր քրիստոնեաներուն:

Այս հավատքով և զգացումներով արծարծուն, ջերմորեն կհայցենք հարուցյալ Փրկչին Հիսուսի Քրիստոսի աստվածային շնորհքներու հորդանու զեղումը Չեր անձին և Չեր աստվածահաճո ձեռնարկներուն վրա, ինչպես հասուր մարդկության և հատկապես հայ եկեղեցվո ու հայ ազգի բոլոր զավակներուն վրա, ի հայրենին և ի ափյուս աշխարհի:

Ամենախորին մեծարանքով՝

Հ. ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՏԻԿՅԱՆ
Ընդհ. աբբանար ՄԽԻԹԱՐՅԱՆ միաբանության

Վեհափառ



* * *

Սուրբ Զատիկ է այսօր: Քրիստոս՝ մեր Փրկիչն ու Աստվածը, խաչաղ և թաղլալ, հաղթեց մահվան և երրորդ օրը հարություն առավ՝ դրախտի դրսերը բացելով մեր առջեւ:

Օրինայլ լինի Տերը, որ իր աստվածայրն շնորհներով արժանացրեց մեզ իր Հարության սուրբ տոնին:

Սրտի խորը ուրախությամբ, Հարության այս ավետաքեր տոնի առթիվ, ողջունում ենք Զերդ Սրբությանը և հրճկանքով, հաղթական բացականչությամբ ավետում. «Քրիստոս յարեա»:

Այս ուրախ առիթով մաղթում ենք Զերդ Սրբությանը երկար տարիների բաշապողություն և հոգեկան ուրախություն ու խաղաղություն՝ հովվելու Զեր խնամքին հանձնված Քրիստոսի ժողովորդին՝ իր փառքի համար:

Մնամ Զերդ Սրբության սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝

ՄԱԿԱՐԻՈՍ

Արքեպիսկոպոս Կիպրոսի

Նիկողիա

* * *

Համեցեք ընդումել իմ անկեղծ զատկական շնորհավորանքները և բարեմալլությունները Զերդ Սրբությանը: Թող Տերը հոգեկան ուրախություն պարգևուի Զեզ և հնադարյան հայ եկեղեցուն:

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Թող օրինայլ լինի Հարությունը Քրիստոսի, և սուրբ Հոգին զորավիգ լինի ամենքիս:

ՄԱՏՈՒԼԻՍ

Լատվիական ՍՊՀ ավետարանական-լութերական
եկեղեցու արքեպիսկոպոս

Ռիգա





ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ
ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՈՒԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ
ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԵՐԻ ՈՒ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱԽՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա. - Ի Ն (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻԾԵ ԱՐՔԵՊԻՍԱԿՈՊՈՒԽ (Երուաղեմ),
ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԸՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒԽ (Ստամբուլ),
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒԽՆԵՐԻՆ:

Ընորհազարդ եղբայր,

Այսու վերստին կպայծառանան մեր հոգիները բոլոր և մեր կյանքի ու-
ղին, զի «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարու-
թեամբն իրով մեզ զկեանս պարզեեաց»:

Արարշագործ ու փրկարար այս մեծ ավետիսը թող նոր լուս իշեցնն մեր
եկեղեցին և անոր սպասավորներուն վրա և զորացնե զՄեզ բոլորս, որ-
պեսզի սիրով միաբան կարողանանք բազմարդյուն դարձնել մեր ձեռաց
գործերը, համբապնդում հոգեւոր կյանքի և ազգային միասնության մեր ժո-
ղովուրդի, որ ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի:

Սուրբ Հարության շնորհներով թող ամուր հաստատվին արդարությունը և խաղաղությունը մարդկային աշխարհին մեջ և թող ածին մանավանդ սերն ու միության ոգին մեր ազգի զավակներուն կյանքեն ներս, մեր սուրբ եկեղեց-վո կամարներուն ներքեւ:

Հավերժական սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն ընդունեցեք շնորհավորանք, եղբայրական ողջուն և աստվածային օրինություն՝ Ձերդ Սրբության, Ձեր հավատավոր միաբանության և համայն հավատացյալ մեր ժողովուրդին:

Մնամք միշտ աղոթող առ Աստված հարցն մերոց՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին

* * *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալության (Լիսաբոն), Սրբարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտտերտառուն), Կալկարտայի հայկական ընկերության վարչությանը (Կալկարտա), գաղութային վարչություններին, հայրենակացական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

* * *

Վեհափառ և սիրելի Եղբայր ի Քրիստո,

Աշխարհի Փրկչին Հիսուսի Քրիստոսի Հրաշափառ Հարության և տոնին առթիվ կիսութանք Ձերդ Սրբության ներկայացնել Մեր սրտալից շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Մեր սրտի խորենն շերմեռանդ կաղոթենք, որ ամենաբարին Նատված անփորձ և անխոռվ պահե ու պահպանե Հայաստանյաց և եկեղեցին, նվիրապետական և Աթոռները և հավատացյալ հայ ժողովուրդը ի խնամն մարդասիրության յուրո, և Զեզի պարգևն մշտառն առողջություն և երշանկալից երկար կյանք:

«Զեզ և Մեզ մեծ աւետիք.

Քրիստո յարեալ ի մեռելոց»:

Մնամ եղբայրական սիրո շերմ ողջունիվ, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա.
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

Անթիլիաս

* * *

Մեր Տիրոջ Հարության երջանիկ տոնի առթիվ Զերդ Սրբության ներկայացնում ենք Մեր, միաբանության և մեր համայնքի անոնից ամենաանկեղծ շնորհավորանքները, ցանկանալով Զերդ Սրբության քաջառողջություն, երջանկություն և հաջողություն:

ԵՊԻԾԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք Բայց Երուսաղեմի

Երուսաղեմ

* * *

Վեհափառ Տեր,


Մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի հրաշափառ տոնին առիթով կուգանք շնորհավորել Ս. Օծությունի մեր կողմեւ և հանուն մեր հոգևորական դաստին և համատացյալ իոտին, մաղթելով Զեզի երկար ու երջանիկ տարիներ, և աստվածային առաջնորդություն և իմաստություն Զեր բոլոր ձեռնարկներուն և ծրագիրներուն:

Քրիստոս Բարյավ ի մեռելոց:

Մատչիմք ի համբուլը Օծելույդ ու. աջոյն և մնամք միշտ խոնարհ աղոթակից Զեզ՝

ԾՈՈՒՀՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք Բայց Թուրքին

Ստամբուլ





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ ՓՈՎՉԻ ՀՐԱԾԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի Յ-ին, Կիրակի.—Զատիկ: Յարութին Տեսոն մերոյ Ֆիւտսի Քրիստոսի.

Օք սովորականից տաք է ու շերմացուցիչ: Առավոտյան ժամը 9-ից Մայր տաճարը և նրա ծառազարդ շրջակայքը լի է հավատացամերի հոծ բազմություններով, որոնք եկել են Հայաստանի, հարևան հանրապետությունների տարբեր վայրերից, ինչպես նաև՝ Լիբանանից, Ստամբուլից, Ավստրալիայից և այլ տեղերից՝ ներկա լինելու հայեկեցու նվիրական տոնի հանդիսավոր արարությանը, լսելու իր սիրեկի Հայրապետի խոսքն ու պատճամները:

Օրվա պատարագին է Վեհափառ Հայրապետը:

Առավոտյան ժամը 11-ին Ն. Ս. Օծությունը Մայր Աթոռի ողջ միարանության ուղեկցությամբ, եկեղեցական թափորով, զանգերի դողանշի ու բազմահազար ժողովրդի խանդական բարեմաղյությունների ներքո, հանդիսավորությամբ Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ զատկական սուրբ պատարագ մատուցելու:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավում արտասահմանի տարբեր երկրներից հայրենիք ուստի եկած հավատացյալները, Գերագույն հոգևոր խորհրդի, Վեհստուգիչ հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախունները, վաճքի պաշտոնությունը և այլ անձինք:

Սկզբում է սուրբ պատարագը, որի երգե-

ցողությունը կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը: Պատարագի հոգեթաթավը մեղեղիները յուրահատուկ հոգականություն են ներշնչում հավատացյալներին՝ մեծահամբաւ երգուին Գոհար Գասպարյանի կատարմամբ:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը և Զատկի տոնի առթիվ հայ հավատացյալ ժողովրդին տախու է հայրապետական իր պատգամն ու հորդորը, որը նոյն եռելոյան ժամը 11.30-ին ձայնափուլում է Երևանի ոսդիոկայանից:

Ս. պատարագի վերջում Ն. Ս. Օծությունը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի գահարան:

Մայր Աթոռի միարանության և հյուրերի անունից Մայր տաճարի լուսարարապետ-տ. Հայկագուն արքեպ. Աքրածամանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Զատիկը, բարեմաղյուն Նրան երկար ու երշանիկ օրեր և հովվագետություն:

Այսուհետու խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, շնորհավորում է բովանդակ հայ ժողովրդի տոնը, օրինում է մեր եկեղեցին ու ազգը, ցանկանում նրան բարօրություն, հայրենիքի բարգավաճում և աշխարհին խաղաղություն:

Ներկաները համբուրում են Վեհափառի աջը և շնորհավորում Նրա Զատիկը:

Զատկական համելիսություններն ավարտվում են Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՔՐԻՍՈՆ ՅԱՐԵԱԼ

Մշակումը՝ ՕՀԱՆ ԴՊԻԹՅԱՆԻ

The musical score consists of three staves of music. The top staff uses a treble clef, the middle staff an alto clef, and the bottom staff a bass clef. The time signature changes between 6/4, 2/4, and 3/4. The lyrics are written in Armenian and are as follows:

Քրիսոն յարեալ
ի մի - ռե - լոց,
Քրիսոն յարեալ
ի մի - ռե - լոց,

The score concludes with a final section:

յարեալ
ի մի - ռե - լոց,
Քրիսոն յարեալ
ի մի - ռե - լոց,
Քրիսոն յարեալ
ի մի - ռե - լոց,
Քրիսոն յարեալ
ի մի - ռե - լոց,

A musical score consisting of three staves of music. The top staff uses soprano clef, the middle staff alto clef, and the bottom staff bass clef. The music is in common time, indicated by a 'C' at the beginning of each staff. The lyrics are written in Russian, with some words repeated across the staves. The vocal parts are separated by vertical bar lines, and the piano part is indicated by a bass line.

Фёри - сиу юр - бии
б иб - иб - юг, юр-бии, Фёри - сиу юр - бии,
Фёри - сиу юр - бии, Фёри-

б иб - иб - юг,

б иб - иб - юг.,

юр - бии
б иб - юг., б

- сиу, Фёри - сиу юр - бии, б иб - юг,
Фёри - сиу, Фёри-сиу юр - бии, Фёри-сиу юр - бии, б

Фёри-сиу юр - бии, Фёри - сиу юр - бии.
иб - иб - юг.

Фёри-сиу юр - бии, Фёри - сиу юр - бии,
б иб - иб - юг, юр - бии.

иб - иб - юг, Фёри-сиу юр - бии, б иб - иб - юг,

иб - иб - юг.

rit.

Fine

Երի - սու յար - եաւ.

Երի - սու յար - եաւ.

ի մի - ռի - լոց,

- եաւ

Երի - սու յար - եաւ.

Երի - սու յար - եաւ.

ի մի - ռի - լոց,

Երի - սու յար - եաւ.

Երի - սու յար - եաւ.

ի մի - ռի - լոց,

Երի - սու յար - եաւ.

Երի - սու յար - եաւ.

ի մի - ռի - լոց,

մահ - տամբ ըգ - մահ կոխ - եաց

ի յա - ռու - թեամ-բբի իւ - ռու

մահ - տամբ ըգ - մահ կոխ - եաց

ի յա - ռու - թեամ-բբի իւ - ռու

մահ - տամբ ըգ - մահ կոխ - եաց

ի յա - ռու - թեամ-բբի իւ - ռու

մահ - տամբ ըգ - մահ կոխ - եաց

ի յա - ռու - թեամ-բբի իւ - ռու

մեզ ըգ-կեա - նրա պար - զեվ - եաց

նր-մա փառէ յա - ւի-շեանս ա - մէն:

մեզ ըգ-կեա - նրա պար - զեվ - եաց

նր-մա փառէ յա - ւի-շեանս ա - մէն:

մեզ ըգ-կեա - նրա պար - զեվ - եաց

նր-մա փառէ յա - ւի-շեանս ա - մէն:

մեզ ըգ-կեա - նրա պար - զեվ - եաց

նր-մա փառէ յա - ւի-շեանս ա - մէն:



ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ

Մարտի 3-ին, նինգաբբի.—Աւագ նինգաբբի. Յիշտառկ ընթեռաց Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում պատարագեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ քառողում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազոն արքեպ. Աբրահամյանը:

Երեկոյան ժամը 5-ին Մայր տաճարում ավանդական հանդիսավորությամբ կատարվեց «Ընտալուա»-ի արարողությունը, լուսարարապետ տ. Հայկազոն արքեպիսկոպոսի հանդիսագրությամբ:

Ժամը 7-ին սկսվեց Խավարման գիշերի արարողությունը Վեհափառ Հայրապետի նախագահությամբ: «Սիրո իմ սասանի վասն Յուդայի» բնարանով քարոզեց տ. Հովսիկ եպս. Սանթուրյանը:

Նույն օրը Մայր Աթոռ այցելեց «Նյութ Յորք թայլա թերթի թղթակից Հենրի Կեմը՝ իր կող հետ միասին: Հյուրերը եղան Մայր տաճարում, թանգարանում:

Հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը Մայր Աթոռ ժամանեց ևս հնդիկ մալարար եկեղեցու միաբան բարեշնորհ Զաքարիա սարկավագը: Բարեշնորհ հյուրը շորս օր Մայր Աթոռում մնալուց հետո, մեկնեց մարտի 7-ին:

* * *

Ապրիլի 4-ին, ուրբար.—Յիշտառկ շարշարանց և խաչելութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի.

Առափոյան ժամը 10-ին Մայր տաճարում կատարվեց «Կարգ խաչելութեան»՝ զիսավորությամբ տ. Հայկազոն արքեպ. Աբրահամյանի:

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ Մայր տաճարում կատարվեց «Կարգ թաղման»:

* * *

Ապրիլի 5-ին, շաբար.—Աւագ շաբար. Ճրագալոյց Զատկի.

Մայր տաճարում կատարվեց առավոտյան ժամերգություն՝ ճեմարանի սաների կատարմամբ:

Երեկոյան ճրագալուցից ժամերգության ժամանակ, ճեմարանի սաները ընթերցեցին Դասիելի գիրքը: Ավագ սեղանի վրա ճրագալուցից ս. պատարագ մատուցեց տ. Հովսիկ եպս. Սանթուրյանը:

* * *

Ապրիլի 7-ին, Երկուշաբբի.—Աւտումն Ս. Ասուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բելերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է Հոգեհանգիստ՝ նվիրված համայն հայ ժողովրդի ննջեցյաների հիշտառակին:

* * *

Ապրիլի 11-ին, ուրբար.—Կեսօրից հետո, ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետի նախախավահությամբ, Վեհարանում գումարվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովը. Հերթական՝ նիստը, որը քննարկեց Մայրավանքի շրջափակում, հին Վեհարանում և Գեղարդա վանքում վերանորոգական աշխատանքների ընթացքը:

* * *

Ապրիլի 13-ին, Կիրակի.—Կրկնազատիկ (նոր Կիրակի).

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: «Հայր մեր»-ից առաջ ոգեշնունչ քարոզ խոսեց լուսարարապետ տ. Հայկազոն արքեպ. Աբրահամյանը՝ «Մահուամբ զմա՞ն կոխեց և յարովթեամբն իւրով մեզ զիեանս պարզեաց» բնարանով:

* * *

Ապրիլի 17-ին, հինգշաբթի.—Հոգևոր ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ չութակի համերգ՝ մասնակցությամբ չութակահար Հրազ Սվաճյանի: Դաշնամուրի վրա նվազակցում էր չութակահարի քույրը՝ Սիրվարդ Սվաճյանը: Կատարվեցին հատվածներ դասական երաժշտական ստեղծագործություններից: Վերջում հոգևոր ճեմարանի տեսուզ տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը շնորհակալություն հայտնեց արվեստագետ քույր և եղբայր Սվաճյաններին և նրանց բարեմադթեց նորանոր հաջողություններ ապագայում:

* * *

Ապրիլի 20-ին, կիրակի.—Աշխարհամատրան Կանաչ կիրակէ.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քնն. Հակոբյանը: «Հայր մեռա-ից առաջ քարոզեց տ. Հովհաննես քնն. Մարուբյանը՝ «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա» բնաբանով:


* * *

Ապրիլի 24-ին, հինգշաբթի.—«Յիշատակի բիւրատ նահատակացն մերոց որք կատարեցան յընթացս նամաշխարհային առաջին պատերազմի».

Ապրիլյան եղեռնի հիսոմչորսերորդ տարեդարձի առիթով Մայր տաճարում պատարագ մատուցեց և քարոզեց լուսարարացետ տ. Հայկագուն արքեպ. Արրահամյանը՝ «Զար քան զմահ անմեղին է ինձ կորուստ կենդանւոյն» բնաբանով:

Ապրիլյան եղեռնի նահատակների խնկելի հիշատակին, հավարտ ս. պատարագի, Մայր տաճարում կատարվում է հոգեհանգիստ՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ: Ապա Ն. Ս. Օծությունը եկեղեցական թափորով առաջնորդվում է՝ Մայր տաճարի հյուսալին շրջափակում Ապրիլյան նահատակաց հուշարձանի մոտ, որտեղ ևս կատարվում է հոգեհանգատյան հատուկ արարողություն՝ հոծ բաղմության ներկայությամբ:





ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՈՂԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 26 և 27-ին Մայր Աթոռում տեղի ունեցավ թեմից թեմսերի խորհրդակցական ժողով, որին մասնակցում էին՝

1. Մայր Աթոռից՝ Մայր տաճարի լուսարապետ տ. Հայկազոն արքեպ. Արքահամբան, Աերսես ծ. վրդ. Պեղապալյանը, Մուշեղ Վրդ. Պետիկյանը, Գերագոյն հոգեփոր խորհրդի ու Վերասուգիշ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, դիվանապետը, ֆինանսական և տնտեսական բաժինների վարիչները:

2. Արքարատյան թեմից՝ առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը, Սուրեն Արևշատյանը, Զավեն Աղապյանը, Պարգև Շահրազյանը, Գևորգ Ամալյանը, Խաչիկ Կովարաշյանը, Պանդուստ Մանուկյանը:

3. Շիրակի թեմից՝ թեմակալ առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաշիրյանը, Նորայր քին. Սարգսյանը, Վագգեն քին. Ղարազովյանը, Հովհանն Ալեքսանյանը, Մովսես Անթապյանը և Ժիրայր Փափազյանը:

4. Վրահայոց թեմից՝ թեմակալ առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, Ալեքսանդր Հովսեփյանը, Գևորգ Դուրգարյանը, Սամվել Խափանյանը, Խաչիկ Հեկեկյանը:

5. Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի թեմից՝ Ռուսաստովի առաջնորդական փոխանորդ տ. Գևորգ Վրդ. Սերայդարյանը և Սարգիս Մելքոնյանը:

6. Աղբքեչանի թեմից՝ թեմակալ առաջնորդ տ. Հովհանն եպս. Սահմանյանը, Գրիգոր քին. Անահանը և Արգար Միրզոյանը:

7. Գեղարդի վանքից՝ վանահայր տ. Նարեկ Վրդ. Շաքարյանը, Արա Բաստրմաջյանը (տնտեսվար):

Մարտի 26-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 8-ին, թեմակալ առաջնորդները և պատգամավորները ներկա են լինում Արեկ-վագալի հանուխնավոր ժամերգության, որին նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Ժամը 11-ին Վեհարանում վկալում է ներքին թեմսերի խորհրդակցական ժողովը, որտեղ քննվում են՝ 1968 թվականի բյուջեի կատարողականը և 1969 թվականի նախահաշիվը՝ բայ թեմսերի:

Երեկոյան պատգամավորները Երևանում ներկա են լինում դրամատիկական թատրոնում «Աստվածային կատակերգություն» ներկայացմանը:

Մարտի 27-ին, հինգշաբթի, ժամը 11-ին, Վեհարանում Վեհափառ Հայրապետը բարեհանում է ընդունել բոլոր պատգամավորներին: Լուսարարապետ տ. Հայկազոն ար-

քեափսիկուպուը բարի գալուստ է մաղթում թեմակալ առաջնորդներին ու պատգամավորներին և Վեհափառ Հայրապետին զելուցում, որ չորեքշաբթի օրը Մայր Աթոռի հանձնաժողովը ընթել է թեմերի կատարողականը և 1969 թվականի բյուջեի նախագիծը: Ապա սրբազն հայր խնդրում է Ն. Ս. Օծությանը տալ իր օրինությունը խորհրդակցության մասնակիցներին:

Վեհափառ Հայրապետը ողջունում է հոգեվորական ու աշխարհական բոլոր պատգամավորների ներկայությունը, բարի գալուստ է մաղթում նրանց և խոսում ընդհանուրապես ներքին թեմերի նեկայական կանքի Ել ավելի կազմակերպման, մեր նեկայական կարիքների մասին՝ անեղով օգտակար թեկադրություններ, և նշում է գործի հաջողության համար ուղիներ և միջոցառումներ: Ն. Ս. Օծությունը անդրադառնում է նաև հայ նեկայություն կյանքի հետ կապված մի շաբթ կարևոր հարցերին:

Ժամը 3-ին Վեհարանում պատգամավորների պատվին տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև Գերագույն հոգևոր խորհրդի և Վեհաստիքի հանձնաժողովի անդամներ և Մայր Աթոռի միաբաններ, «Էջ-

միածին» ամսագրի խմբագիրը, դիվանապետը, ֆինանսական և տնտեսական բաժինների վարիչները, շորջ 50 նոգի:

Ելոյթներ են ունենում Վեհափառ Հայրապետը, տ. Հայկազոն արքապիսկոպոսը, տ. Հովհաննես և տ. Կոմիտաս եպիսկոպոսները, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը և ներկաներից ունակը:


Երեկոյան պատգամավորները Երևանի օպերային թատրոնում ներկա են լինում Վերնիկ «Տրավիատա» օպերայի ներկայացմանը:

Մարտի 28-ին, որբաթ օրը, առավոտյան, բոլոր պատգամավորները ուխտագնացության են մեկնում Սարդարաբադի ներուսամարտի հուշարձանին:

Ժամը 2-ին Երևանի «Արագիլ» ճաշարանում պատգամավորների պատվին տրվում է ճաշկերույթ: Երեկոյան Մայր տաճարում պատգամավորները ներկա են լինում վերջին Հակման արարողությանը, որին նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Մարտի 29-ին, շաբաթ օրը, թեմակալ առաջնորդներն ու պատգամավորները հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից ու մեկնում իրենց թեմերը:





Հ. Ճ. ՍԻՐՈՒԽԻՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

Այդպիսի մասունք մը հայտնվեցավ վերջերս: Գոհարիկ Ղազարոսյան կես դարեւ ի վեր գուրգուղանքով պահած էր զայն ու հիմա երբեմն է որկեր: Կոմիտաս, նույն այդ օրերուն, երբ խաղաղոթյան վայրկյաններ կունենար ալեկոծ իր հոգին, փորձած է թուղթին հանձնել իր մտածումները: Նշխար մը փրկված է նաև անոնցմեն: Թեոդիկ զայն տպեց զինադարին. ան հետեւյալն է.

Ազգի վիճակը¹²

...Հոտն անհովիվ՝ մոլոր ու շփոթ, աներեւովոյթ և անզուսապ ալիքներ հախուռն կհուզին ի խորս մեր հալածական և ողբալի կենաց ծովու Անմիտ որսորդներ բոլորած՝ միամիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թույն կտեղա. բուժիչ ուժ չկա: Ավերած, սարսափ ու սանձարձակ կեղեքում մեկ կողմեն, անսարքերություն, օտարամոլություն և ցեխուս սրտեր մյուս կողմեն: Փառասիրություն, փութկոտություն մեկ երեսեն, ապիկարություն, տգիտություն մյուս երեսեն: Յուրաքանչյուր ոք իր պաշտոնն զգեցած է իր հանդերձ. յուր մերկություն մտաց ծածկի ի միամիտ աշաց: Մեր մարմինը նեխած է, մեր հոգին ապականած, մեր կյանքը դիմակնացած: ...Ուր է մեր խոհական Խորենացին. Թող ելլե արյունաքամ հողու տակեն և ողբա մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը: Մեր նախնիք իրենց

* Շարունակված «Եղմիածին» ամսագրի 1965 թվականի №№ Ա-ից, Ե-Ժ-ից, 1966 թվականի №№ Ա-Զ-ից, Է-Ժ-ից, 1967 թվականի №№ Գ-Զ-ից, 1968 թվականի №№ Ա-Դ-ից, Է-Ժ-ից և 1969 թվականի № Գ-ից:

¹² Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1916—1920, էջ 61.

պաշտոնին փարած էին անձնահեղձությամբ. իսկ մենք կհափշտակենք գործն ընշաքաղցությամբ:

Սիրտս փլած է:

Կոմիտաս վարդապետա

Հապշտապ, հաճախ անհարիր այդ տուկերուն մեջ իմաստության կայծեր կան. մտածումներ պոռթկալու այդ ձեր հատուկ էր կոմիտասին. ինչպես քերթողական իր փորձերուն՝ նույնպես իր պարզ խոհերուն մեջ միշտ կոստուտեր Կոմիտաս, թառե թառ կանցներու իր մտածումը:

Եվ ոչ մեկ բժիշկ պիտի կարենար իր հոգին քայլայող ցավին այնքան ճշգրիտ ախտորոշումն ընել, որքան Կոմիտաս ըրած է ինքը.

— Սիրտս փլած է...

IX.—Սպիտակ հացը

1917-ի վերջերը Թաթավլայի թաքստոցս սթողուցի: Երկուքուկես տարի ճգնելը էի հոնամու զիղերս քայլայվեր էին այդքան ատենական խուցի մը մեջ ապաշխարելեն: Անհրաժեշտական աղավ թերայի շրջանը գալ պահվորի ավելի մոտ ըլլալու համար աշխարհին: Առաջին շերթին կարուտ էի բժշկի: Բայց որո՞ւ կրնայի դիմել, և ո՞ր բժիշկը կրնար հանդիպնի մահապարտի մը մոտ գալ երկար շարշարեցի ուղեղս, որպեսզի ճար մը գտնեմ: Միակ անունը, որուն վրա հեք ուղեղս կանգ առավել բժիշկ Թորգոմյանը եղավ! Ուրկե՝ որի Ուրկե՝ միտքս ինկավ այս վտիտ, հիմանդկախուս զգույշ ծերունին, որ աքսորեն հրաշքով էր ետակեր: Բայց գիտեի որ ան բարի ճարդ է ուս հայրենակեր, ու չվախնա թերեւս գալ դարմանելու կարմիր հունձքեն դիպվածով ճողոպ-

բաժ մտավորական մը, զոր սստիկանությունը կփնտրեր գիշեր ու ցորեկի:

Ալլուր պատմած էմ թե այս երկուտ մարդը ինչպես ինձ գալու քաջությունն ունեցավ և շարունակեց թաքսոցս հաճախել, հանձն առավ վտանգավոր գործեր ալ, որոնք կրնային պատճառ գտանալ իր կորուատին, ինչպես որ ինքը ևս պատմած է իր հուշերուն մեջ:

Բժիշկ Թորգոմյանին միշոցով տեղյակ կը մնայի գուրսի կյանքին, ու ան էր որ ինձ լուր կրերեր Կոմիտասին ալ, որուն կայցելեր հաճախի: Գիտեի պաշտամունքի հասնող էր սերը դեպի վարդապետը՝ որուն հետ միասին աքսոր ևս եղեր էր, գիտեի որ մեկն է եղած Կոմիտասը դարմանող զույց բժիշկներին, և զայն բոժմարան զետեղողներին, բայց ես, պրոֆանս, կղարմանայի թե բժշկական այսքան փորձառությամբ մարդիկ ինչպես պարզ հիմարի մը տեղ էին դրեր հեք Կոմիտասը ու զայն նետեր էին հոգեկան հիվանդներու ապաստանարանը:

Լուրերը, զորս ես կստանայի գուրսեն, զիս բերեր էին այն համոզման՝ թե Կոմիտաս բժիշկներուն կարծած խենդը չէ, և թե անոր ջղային տագնապները հոգեկան տարրեր տառապանքներու արդյունք են: Բժիշկ Թորգոմյան միշտ հեամառեր իր կարծիքին վրա, ու կպնդեր թե ան պետք է աշխարհեն պահ մը մեկուսանա, չգրե ու շկարդա, մոռնա իր նոտաները:

Այս էր բժիշկներուն կողմէ Կոմիտասին պարտադրված ռեժիմը, — զգել ու շկարդա: Բժիշկ Թորգոմյան ինքն իսկ պատմած է ինձի, թե անգամ մը Կոմիտասին այցելուն՝ ուրմանքով տեսած է որ Կոմիտաս սեղանին ուղիւր անցած զբաղած է գրելով: Բարի բժիշկը, սարսափած այս տեսարանեն, կսաստ հեք վարդապետը այն միննուն զայրությով որով կսաստեն իսկական հիմարները.

— Ես ձեզի ըստի՝ թե պիտի շաշխատիք...

Հետո թուղթերը կիւե ձեռքեն, ու կպատռե մեծ արկանագետին շլորդած աշքերուն առջեւ:

Վարդապետը ոտքի կկանգնի հանկարծ, ու դուռը ցույց տալով բժիշկին, կպուա.

— Դո՞ւս, այլևս չգասս...

Այդ պահեն կակսի Կոմիտասի ատելությունը մարդոց գեմ, բոլոր անոնց գեմ՝ որոնք իր բարեկամներն էին եղեր երեկ...

Բժիշկ Թորգոմյան 1919 մարտ 17-ին Պոլսեն Արշակ Չոպանյանի գրած իր նամակին մեջ ինքն ալ կըսե թե «ամենքս՝ ըստ իրեն, թշնամի ենք, մանավանդ ես, և ինձ հետ բոլոր բժիշկները կամ բժիշկ անունը կրողները»¹³:

Եվ սակայն ատելություն շուներ Կոմիտաս բոլոր մարդոց գեմ: Ան հաճույքով կընդուներ երեկվան իր սանուցիները, իր «Քերթենքելե»-ները:

Փեմեղյան բուրերեն, որոնք հարևան էին պահվածած տանս, Կոմիտասին լուրեր ստեղ կառնեինք: Կիմանայի անոնց միջոցով, թե դառն օրեր կայցընն վարդապետը իր հզնարանին մեջ: Պատերազմի օրեր էին, սղած էր կյանքը, և հիվանդանոցը չէր կրնար շամայ ըլլալ հիվանդեալ մը համեսպ, որուն համար դումար մը միայն կվճարեին գուրսի իր բարեկամները: Սև հաց կկերցնեին, այն սև հացը զոր կծամենինք գարշելով: Սպիտակ հաց մեծատուններուն սեղանը կտեսներ միայն:

Լուր ղրկեցի Փեմեղյաններուն որ իբենց հառաջիկա այցին սպիտակ հաց տանին վարդապետին: Անոնք շոքուա ևս տարեր էին մեկտեղ, ու վարդապետը երբ տեսեր էր սպիտակ հացն ու շոքուան, հափշտակեր էր զանոնք ու բացազանչեր.

— Սպիտակ հաց...

...Զգիտեմ թե կաք թե չկաք հիմա, անո՞ւ աղջիկներ, որ այդ գծնդակ օրերուն Կոմիտասին այցի կերթայիի խումբով ու անոր զառն վայրկանները կքաղցրացնեիք: Աշխարհն ու իր մարդոցմեն խրոշած իր այդ օրերուն՝ ո՞վ գիտե ի՞նչ անձկությամբ ան ձեղ կսպասեր, որպեսզի ձեր բարի ժպիտաներով ամուքը իր տառապանքները: Դուք իր կյանքին սփոփանքի վերին պահերը տվիք, իր հոգին աղջամուզ մանելե առաջ...

X.—Քեն աշխարհին դեմ

Խոնարհնք գիտության նվաճումներուն առջև, և հրաշքներուն՝ զորս երբեմն բժշկությունը կընե: Մարդոց գանգը կրանա, հաշմանդամները ուրիշ կհանե, նոր սիրտ կդնե մարդոց կուրծքին տակ: Ան սակայն դեռ ի վիճակի չէ մարդոց հոգին ալ կարդալ, շոշափել անոր ցավերը, թափանցել անոր զադունիքներուն:

Ան շկրցավ ճանշնալ վերքը որ Կոմիտասի հոգին էր կրծեր, ու տապալեր էր զայն:

Ան շկրցավ գիտնալ թե անոր հոգեկան ողբերգությունը սկսավ մարդոց հանգեպ իր բենով, ու ալ կրցավ գուշակել թե ինչու քեն էր ըրած ան աշխարհին:

Պատմելով իր այցը Կոմիտասին՝ Հարենցի ամարանոցն զանսակ հետո Բանկալթի իր տունը, Կարո Ուշագլյան կգրե.

«Այդ միջոցին երբ այցելեցի իրեն, սպասագորը չուզեց թողով որ վեր ելեմ, ըսելով թե վարդապետը մարդ շընդունիք: Ես շատ կարևորություն չտվի այս խոսքին, ուղղակի վեր ելա, մտա իր սենյակը՝ «Բարև վարդապետ» բախու: Բարևս առավ բարկացած և բթին տակեն: Ծփոթած մնացի:

¹³ «Հուշատերեն», «Վեհա», 1938, նոյ.-հունվ., էջ 71:

— Ի՞նչ կուզեք, հարցուց:
 — Ույնչ, վարդապետ, այցելության եկա՝
 բայի:
 — Մարդ չեմ ուզեր, գնա՞։
 — Գնա կըսիմ, մինակ մնալ կուզեմ:
 — Վարդապետ, ի՞նչ բանի համար վշտացած եք:
 — Եղբայր, իմ տունս չէ՝ այս ազատ չեմ ուզածիս պես ապրելու. մարդ չեմ ուզեր, չեմ ուզեր. գացեք, ելք դուրս:
 Եվ երեսը դարձուց անդին: Ելա դուրս և վարը սպասավորին մոտ իջա՞։

Այսպես սկսավ վարդի բոլոր այցելուներուն հետ, եվ այս վիճակը տևական դառնալ սկսավ: Մենք տակավին լավատես էինք իր մասին և կարծենք թե իրապես բանե մը վշտացած է, կամ շատ ծանր մտատանջություն մը ունի...: Ժամանակ առ ժամանակ կրկին փորձ կընենք իր մոտ երթալու, սակայն տեսանք որ ա՛լ կատակ չէր: Իրապես հիվանդ էր վարդապետը, հուզված և վախով կդիտեր մեզ, կաշխատեր մեր ներկայութենեն աղատի: Ոչ ոքի վրա վստահություն ուներ, միայն իր սպասավորին հետ կխոսեր կարձկարուկ, իր տնային պետքերու մասին:

Բժիշկ Վ. Թորգոմյան պետք տեսավ հունական հիվանդանոցի մտային հիվանդության մասնագետ դոկտոր. Գոնոսը հրավիրել խորհրդակցության համար: Քանի մը անգամներ այցելեց բժիշկը: Ոչ մեկ օգոստ:

Օրերը կանցնեին և մեր սիրելի վարդապետը համառեր իր լրակեցության և մարդատյացության մեջ: Հաճախ սնունդ ալ առնել չէր ուզեր: Մեղի համար իր այս վիճակը բնական գալ սկսավ: Բայց չէինք համոզված թե վերջնական պիտի ըլլար այդ վիճակը իրեն համար, և կսպասեինք որ օրե օր վերստանա իր նախկին վիճակը: Բժիշկ Թորգոմյան, Ա. Հարենց և Զ. Լ.¹⁴ միշտ կհսկեին և միշոցներ ձեռք կառնեին ճար մը գտնելու համար:

Այս շնչող մարդը մարած էր Տիուր և լուռ, կզակը ափին՝ կդիտեր հեռո՛ւ ծովն ու լեռները¹⁵:

Վարդան Սարգսյան, Կոմիտասի ձեռնասունը՝ որ լրիվ ծանոթ է վարդապետին Պոլսո կյանքին՝ կգրեր տարիներ հետո, թե «Ինչու աշխարհին ֆեն ըրավ Կոմիտաս» խորագրին ներքեւ.

«Վերադարձավ աքսորեն քայլայված ցիդերով: Ու այդ քայլայված ցիդերուն վիճակված է դառնությանց նորագույնը ճաշակել: Պոլսո ցողերը, որոնք մինչև այս օրը խունկ ծխած էին իրեն, երածշտասեր երևալու սնո-

րիզմեն բռնված, մեկ բացառությամբ¹⁶, չմուտեցան այլես իրեն, խորշեցան՝ իրեւ ժանտախտ:

Չէ՝ մի որ նա աբսորված էր, չէ՝ մի որ նա կասկածելի մըն էր հաշութություն կառավարության: Անոնք վախցան իրենց կաշին: Եվ ավելին: Անոնք լայն օրերու բարեկամներ էին միայն: Խնամակալություն կազմած էին ու Կոմիտասին ամսաթոշակ կվճարեին իր «Հեղալ» քրտինքովը շահած գրամմերովը: Այդ ժանր օրերուն Կոմիտաս չէր կրնար համերգ սարքեր, դասերը նվազած էին, հասուլիթի աղյուսը դադրած էր: Ո՞վ պիտի վճարեր Կոմիտասի տան վարձքը, սնունդը, խոհարար վարպետին թոշակը: Ո՞վ:

Անոնք շքաշվեցան այս հարցը վարդապետին ականջն հասցնելու: գգացուցին խնայողության պետքը. թելադրեցին ծախել գորգերը, ես դարձնել դաշնակը: Ու նա ստիպվեցավ գրավի դնել ոսկի ժամացուցը որ նվեր տրված էր իրեն 1906-ին և որ թանկադին էր երածշտագետին համար իրը հիշատի:

Վարդապետը շտարավ այս բոլորը, բայց ներսիդին բույն դրավ ու ծավալեցավ դառնությունը: Նա չուզեց զգացնել իր շքավորությունը, անգամ իր աշակերտներուն: Ինքը անոթի կեցավ խոհարարը շճամբելու համար: Քառասնօրյա ծոմ մը պատրվակեց ու աղոթելով ջանաց մոռնալ քաղցրը. Անկե վերջը շարունակեց օրական մեկ բաժակ թիվ միայն խմել, այն ալ առանց շաքարի, երբեմն շամիշով:

Վարդան Սարգսյան կարծեց որ եթե մարդոց գեմ ըրած քենը գլխավոր գրգիռն եղավ վարդապետին հոգեկան տագնապին, այս տագնապին մեզ դեր խաղացին նաև ուրիշ շարժառիթներ ալ, ինչպես տարիներու ընթացքին իրեն հանդեպ ցույց տրված շկամությունները, իր գեմ քանից սարքած խալակրությունները, զուցե և առհավական տրամադրությունները որոնք թագոսին խնկարկու հորմե մը կու գային ինչպես և իր անդրդելի կամքը շղավաճանելու կուսակրոնության իր ուխտին, և ինչ որ գլխավորն է, ցնցումը զոր կրեր էր աքսորի սարսափներուն մեզ:

XI.—«Սուտ խենդի մը չարչարանը»

Գիտունները դժբախտ սովորություն մը ունին, — իրենց զո՞ր դագաղը շդրած՝ գիազնության կենթարկեն անոր մարմինը:

Այդպես ըրին Կոմիտասին ալ: Անոնք մը տալի առաջ զայն տապալող ախտին՝ փորձեցին որոնել անոր ծնունդ տվող շարժառիթները: Ոչ այդ շարժառիթները կրցան երևան հանել սակայն, ոչ ալ ճշգրիտ անունը տվին անոր հիվանդության:

¹⁴ Առն Զիլեր:

¹⁵ «Արածանի», էջ 71—72:

¹⁶ Կակնարկի Աստվածատուր Հարենցին:

Այնպես որ Կոմիտաս անդարձ բաժնվեց այլ մեզմեն, իր հետ տանելով գաղտնիքը այն ևղերական հարվածին՝ որ դինք շարշարեր էր զույգ տառնյակ տարի:

Ախտածանալազության փորձերը միայն բրձիշկները չըրին: Խոսք առին նաև շատերը զինք ճանչցողներնեն:

Ոմանք մինչև նախնիքը գացին: Այդպես բրավօ, օրինակ, Առնակ, իր հայրենակիցը՝

«Եղողմոնին հայրը, Գեորգը, երաժիշտագիր և փնտարված կատակախոս մըն է եղած, միայն թե թիւ մը շափականց արբեցող»¹⁷:

Լսած ենք, ուրիշներեւ ևս, իր հորը զինովությանը մասին,—ամենեն զուրին ախտանաշությունը՝ որ կուղի նախատրամադրություն մը ենթագրել Կոմիտասի մեջ դեղի շարաշուր պահը:

Նույն այդ հայրենակիցը, խոսելով շարժառիթներուն մասին՝ որոնք կրնան ստեղծած ըլլալ Կոմիտասի հոգեկան փլուզումը՝ կրեւ նաև.

«Կրնան իր մտային հիվանդությունը վերագրել հորը ալքոլամոլության (թեև նույն ակին կապարտինք իր մեջն հայտնվող հանձարն ալ), կամ ավելի տրամաբանորեն թուրքին անորակելի արհավիրքին»¹⁸:

Ուրիշներու համար ժուժկալության՝ զոհն էր Կոմիտաս: Անոնք կարծեցին թե անոր հոգեկան այս տագնապին մեջ՝ ամուրիի իր կյանքն ալ դեր ունեցեր էր: Եվ բնականարար մեղքը բարդեցին կուսակրոնության վզին՝ որոն հանձնառու եղեր էր Կոմիտաս, երբ դեռ աշխարհը ճանչցած չէր:

Այս բանին հավատացեր էին զինք դարձանող բժիշկներն ալ, և հանցանքը վերագրեցին այն ծայրահեղ ժուժկալության՝ որոն գերին դառնալու իր ուխտին մեջ հճամառեր Կոմիտաս:

Կարո Ռոշազյան իր հուշերուն մեջ մեզի կապատմեն թե ըստ թժ. Թորգոմյանի իրեն ըստածին «Ճեռնարկներ եղած են զոհացնելու բնության պահանջը, բայց Կոմիտաս մնացած է միշտ անզգա և անդրդպիլի բոլոր այս ճեռնարկներուն հանդիպաց»¹⁹:

Սիրո կապերու մասին ևս խոսեցան. եթե չգրեցին հրապարակով՝ գոնե հաճախ փսիդրսացին իրարու. Նույնիսկ անոնքներ ալ հիշեցին սիրո այդ կապերուն ակնարկած ատեն:

Բոլոր այդ ենթադրությունները պարզ կասկածներ էին լոկ, ու անոնք հաճախ հիմ ունեին սրտարացաւթյունը զոր Կոմիտաս ցույց կու տար բոլորին հանդեպ և որմե գաղտնիքներ կարծեցին որսալ: Կոմիտաս ամրացուցած չէր անտարակույս իր սիրտը ու համա-

¹⁷ Առնակ, Կոմիտաս վարդապետ, «Հայրենիք» ամսագիր, 1936 հունվար, էջ 73:

¹⁸ «Հայրենիք» ամսագիր, 1936 հունվար, էջ 79:

¹⁹ «Արածանի», էջ 72:

կրրություններ ալ անշուշտ ուներ, ունեցած էր և ուներ. բայց երբեք չրոնկեցան անոնք, ու չգայթակղեցուցին իր հոգին. եթե ամրացուցած էր իր սիրտը, բայց կրցած էր զայն զապել: Ու ան իր զաղանիքները հետք տարավի...

Ումանք ալ հալածախատ (manie de parésécution) սրակեցին Կոմիտասի տաղնապր, կարծելով որ ան ևս կտառապի այդ տեսակ մը ջղագրգոսթիքնեն որուն ենթական, վեցին ծայր կասկածոտ գարձած, բոլորը թշնամի կկարծե իրեն և կերեակայի որ դինք կհալածեն ամեննքը: Այնպես որ կարծողներ կան թե կյանքի ընթացքին իր կրած հալածանքները զանության պարզ զացումն մը անդին անցած են, շարշարած են իր հոգին երկար, և վճռական դեր կեր կատարած են իր հոգեկան ուժերուն անզայտացման մեջ: Արգարն կհեղեղվի անընդհատ թե իր առաքելության ճամբռն վրա Կոմիտաս թշնամիներ ունեցավ միշտ գեմբ: Ճիշտ չէ այդպես որակել խոշոնդուները որոնց բախեցավ գրեթե միշտ և դանությունները զորս քաղեց ամեն մեկ քայլին: Անձնական թշնամիներ ինչո՞ւ ունենար:

Հակառակորդի որակումը ևս սխալ պիտի ըլլար տալ ողորմելի այն մարդոց որոնք ատեն-ատեն հաւատնկեցան իր համբռն վրա, և անկարող բմբռներու առաքելությունը որուն լժված էր փորձեցին զայն խանդարել գորափի իրենց կրկոսոցով:

Ո՞ւ, ան թշնամիներ չուներ, ոչ ալ հակառակորդներ: Իր թշնամին հայկական միջավայրն էր: Ան լիապես կզգար ատ: Այնպես որ արհամարհեց, հեղնեց, անզոսնեց զինք հալածողները, զանությունը իր ներսը խեղդեց: Բայց իրեն ծանր եկալ երբ զինք լրեցին նաև անոնք որ իրենք զիրենք բարեկամ հոչակեր էին իրեն՝ փառփի իր օրերուն:

Բյուզանդ Քեշեյանի կարծիքով տարբեր շարժառիթներ, ձեռք-ձեռքի տված, ստեղծած ըլլարը վերցին տագնապր:

«Երեք շաբաթ մեկտեղ ապրելով Կոմիտաս վրդ-ի հետ, սրանչացեր էր իր ֆիզիքական ու բարոյական առողջությանը: Ո՞ւ մահիձի, ո՞ւ բարձի սկետք ուներ անմեղ մանկան խոր ու անծակ քունը քնանալու համար: Լեզուն միշտ մաքուր ու զվարիթ, սակավապետ, բարեհամրուց, և վճառողներուն սիրու տվող, նաև վերշին ծայր հարգող պատշաճությանց, այնպես որ մեր ազատութենեն ետքն ալ երբեք հանձն չառավ ուրախ թեթև երգ մը երգել, այլ կամ կրոնական և կամ ժողովրդական տիտուր տաղեր միայն լսվեցան իր բերնեն: Զինք մոտեն ճանչցողներս իր խելազարությունը կվերագրենք երեք պատճառի. Ա. խորունկ ցնցումը զոր կրեց ի տես և ի լուր աղգային աղետներուն. Բ. պատերազ-

մին բերմամբ իր նյութական վիճակին հիմնավոր քայլքայումը և Գ. իր խստակրոն ժուժկապության շղային հետևանքները²⁰:

ինչպես բոլոր արտասովոր մարդիկը՝ իր տարօրինակությունները անշուշտ Կոմիտասն ալ ուներ: Տարօրինակության այդ պահին զոմիտաս կունենար իր կատակներում, իր սրամտությանց, մանավանդ իր բառախաղերուն մեջ: Իր հորինած ոտանավորներն անգամ բառախաղեր էին, որոնք որոշ արտառոցություն կմատնեին, ինչպես դիտել կուտա ջուղայան ալ:

«Ոտանավորները Կոմիտասի հանճարին հարազատ ծնունդներ չեին, այլ մեծ մասամբ իր մտքի հիմանդր բոպեներուն տքնազան բռնազբոսիկ ու բառախաղային մտասնեռուներով տիրապետված արտաքրություններ: Տարօրինակությունները կշեցավին հետքին հետքին այն ոտանավորներուն մեջ որ Պոլսեն մեղի դրկվեցան և զոր ապահովապես ըոլորն ալ Պոլիս գտնված ատենը զրած է, ուագնապին հետո՝ կես զարթումի մաղանցովի շրջանին. իսկ ոտանավորները այն տեսրին որ Վիլ-էվլարի իր սենյակեն գտնվեցավ, փոքր մասով մը գրած է կես հիմանդրի մեջ, և մեծ մասամբ՝ մտավոր գրեթե լիակատար խանդարման փուլի մը մեջ հիշեմ որ այդ տեսրակին ոտանավորներն տողեր միտքս պահած էի, երբ ատոնք կարդախս քիչ հետո 1920-ի աշնան Պեյրութ և հետո Ատանա, հոն ճանշացա հմուտ զինվորական ֆրանսացի թիջիկ մը, որուն խոսեցա Կոմիտաս վարդապետի վրա, և անոր այդ տարօրինակ ոտանավորներն քանի մը բնորոշ տողերուն թարգմանություն մը ցուց տվի. «Կորած է այդ մարդը, ըսավ, այսպիսի բառախաղերով իրենց ուղեղը շարշարողներուն ցավը՝ որոշ, cataloqué հիմանդրություն մըն է, և դժբախտաբար անբուժելի»²¹:

*

*

Մեկն եղա անոնցմե որ շարունակ պնդեցին թե առաջին օրերու ինելագար մը չէր Կոմիտաս, ինչպես կարծեն մինչև հիմա ալ: Պարզապես դանաշացած մըն էր ան, գոնե սկիզբ օրերուն:

Կոմիտասի հոգեկան տագնապը կակսի ծիշը այն պահեն երբ իր «խնամակալները կղաքացնեն օր մը իրեն թե սպառելու վրա է իր» հիմնադրամը, —իր համերգներն գոյացած գումար որմե կողային իր ներկա ծախքերը: Ուղղակի հրավեր մըն էր ադ ավելի խնայողությամբ ապրելու: Ու այս հրավերը կուղովեր մարդու մո որ աքսորեն հաղիվ

ձողոպրած՝ կապրեր սարսափներու հաճախանքին մեջ, բոլորովին լրված աշխարհնեն:

Գուսան վարդապետի կողմե մեղ դրկված նամակ մը Կոմիտասին տված իր մեկ այցելության մասին՝ առիթ տվալ տարիներ առաջ հոգումով բայց և դառնությամբ լցուն բանի մը տող գրելու Բուրքեշի մեր «ծավասարդ»-ին մեջ «Սուտ-խենդի մը շարշարանքը» խորագրին ներբեւ: Կըսէինք մեր այդ հոդվածին մեջ:

«Վեց տարի մը կրլա որ Պոլսեն տարին Փարիզ բուժարան մը ներկային հեք արվեստագետը, ու հոն հանձնեցին զայն ճարտար հոգեբուժներու խնամքին: Բայց անկե ի վեր ամեն օր կապակսի մարդոց հույսը զայն կաղղուրված տեսնելու: Իրեւ թե հիվանդ ըլլար ինեղ՝ Կոմիտասը: Անոնց որ պատերազմի վերջին տարիներուն Պոլիս անցուցած անոր զրկանքները զիտեն, դժվար թե հավատան որ խկապես հիմարացած է հայ երգին անդուշական վարպետը: Ո՞ւ կարծված հիմանդր չէ ան ան պարզապես խենթ կծեանա: մարդոց և մանավանդ բարեկամներու գեմ սնուցած իր զառնությունն է որ կատղեցուցած է իր հոգին, ու զայն կմղե այլանդակություններու: Իղուկ է իր ախտին համար շարժառիթներ որոնել: մարդիկ, իր բարեկամները, իր «բարերար»-ներն էին որ զայն անցուցին զինքը, խորացնելով իր մեջ մարդոց հանդեպ իր զգացած զզվանքը: Գիտեմ որ պատերազմի շրջանին պատառ մը սպիտակ հացի կարոտը քաշեց հաճախ որովհետեւ իր հիմնադրամը կսպառեր, և զայն զնտիւու հանձնախումբը շնորհը շուներ կարծես այդ բանը շզգացնել վարդապետին, որ աքսորեն նոր զարձած՝ հոգեկան փափուկ գրության մը մեջ էր արդեն: Ու բառասուն օրի մը շափ ծոմ պահեց անգամ մը Կոմիտաս. շատերը այնպես հավտացին թե երկնային գթություն չայցելու համար է տառապլալ հայ ժողովուրդին վրա. քիշերը միայն գիտցան որ խնայելու համար էր իր ունեցած քիշիկ մը սնունդը. ու երբ զային տկառություն մը անկողին իցեցուց զինքը՝ հիմարանց մը նետեցին զայն, խենդերու ժիորին մեջ, մարդոցմե, գուրգուրանք հեռու: Հոն էր որ վարդապետը քեն ըրավ մարդոց գեմ, և ուխտեց աւել իր բարեկամները. Հոն էր որ աշխարհի ունայնությունը տեսավ, ուր մարդ էակեն գանեցավ, և երբ պահ մը փորձեց աշխատիլ՝ գրածը ձեռքեն առին պատուցին մտքի հոգնություն մը խնայելու համար: Ո՞ւ Կոմիտասը խենդ չէ: ան բռնի խենդ կպահե ինքնիքը. եթե գիտության, բժշկության մասնագետները թուլ կու տան որ գործածենք այդ բացատրությունը: Ճիշտ է, ան այլև տերը չէ իր շիղերուն. բայց սիսալ տեղ շորո-

²⁰ «Ամենուն տարեցուցը», 1922, էջ 43:

²¹ «Անահիտ», 1939, ապրիլ—մայիս, էջ 3:

նենք գոնք իր ախտը բերող հուզումները...»²²:

Անշուշա սիսալ պիտի ըլլար տառացի ընդունիլ բոլոր այս ըսվածները, անոնք գրվեցան պահու մը երբ շատ մոտ էին մեղ դժոնդակ այն տարիները երբ Կոմիտաս կյանքի լեղին կքամեր՝ իր երեկվան «բարեկամ» ներեն ապաստարան մը նետված, ու անոնց դեմ իր զգացած դառնությունը վերածած քենի, իր հոգին փակած էր աշխարհին, տառապելու համար լուր ու միայնակ: Աշխարհի դեմ զայրացած այս զժրախտ արվեստագետը խենդի տեղ դրին այն ատեն մարդկի: Տառապող մարդ մըն էր ան ի սկզբան:

Հետո էր միայն որ պիտի խենդենար ան: Բժիշկները շասակցան իր ցալը: Սկիզբն իսկ խենդ կարծեցին զայն: Զհետաքրքրվեցան թե ինչո՞ւ տակավ քեն կրնի մարդոց, քառասուն օր ծոմ կպահե, կմաքառի երր զինքը բուժարան մը փոխադրել կուզին: Չուզեցին գիտնալ թե ինչո՞ւ կսկսի ատել իր բարեկամներն ու «բարերար-ները, կվոնտե զանոնք իր մոտեն, ու փոխարեն խայտանքով կրնունի իր անուշիկ «բերթենքելե» ները երբ անոնք բուժարան կու զան, ու հրճվանքով կիսկ անոնց ձեռքեն անոնց բերած շոքուան ու սպիտակ հացը:

XII.—Զինադադարին

Զինադադար: Կանգ առած են հայացինչ սարսափները: Փակված է վերջին գուլիք աղեմարշ մեր վեպին, ձգելով խլյակներ միայն շեն ժողովուրդի մը որ դիտապաստ ինկավ իր հուսկերուն ու ճիգերուն զմայլելի թափին մեց: Որբեր ու ավերակներ պատած են հայոց աշխարհը:

Բայց ահա հույսը պահ մը նորեն կողողե հայ ժողովուրդի մնացորդացը: Անգամ մըն ալ կհավատ եվրոպացի փաղաքուշ խոսքերուն, ցնորքներով նորեն կլեցիի: Սուգր կրմունա շուտ մը, ու կկարծե թե նոր գիրք մը կրացվի իրեն՝ աղվոր նոր դրվագներով: Նույն այն գինովությունն է զոր ապրեր էր տասնամյակ մը առաջ 1908-ին, ցնորքներով լեցուցած հոգին:

Զինադադարը, 1918 նոյեմբեր 11-ին, թարստոցներուն դուռները բացավ: Խենդի պես նետվեցանք փողոց:

Կոմիտաս անդին, լրված իր խուցը, մաս չունի այս ոգևորության մեց: Ան քեն ըրած է միշտ մարդոց, ու լուր ալ չունի թե սուգեն ելած է արդեն իր ժողովուրդը:

Նոր էջ մըն է միայն բացված անոր սեփակ գրին մեց: Ահավոր վեպն է որ պիտի շարունակվի դժիսեմ նոր դրվագներով:

²² «Նավասարդ», Թուբեր, 1925 փետր.—մարտ, էջ 3:

Ծովե ծով Հայաստան ստեղծելու աենդեն բռնված՝ Կոմիտասով, ավաղ՝ քիչ զրադեցանք: Զայն վստահեցանք բժիշկներուն, դիտության: Գիտությունը համախ սիսալեր է. սիսալեցավ և այս անգամ: Խենդ կարծեց Կոմիտասը, և հիմարաբուժներուն հանձնեց զայն:

Պոլիս, իր այս նոր դինովության մեջ, պա՞մ մը մոռցավ հեք Կոմիտասը:

Մեր խզմատանքին հետ հաշտված կարծեցինք մենք հանձնախումբ մը կազմելով ու դրամ ժողվելով հիվանդանոցի իր ծախքրուն համար: Ես ալ կայի, ավաղ, այդ հանձնաժողովին մեց:

Քիչը երացին կհանդգնեին այցի երթալ անոր, ամենուն երեսին կփակեր դուռը:

Այդ հանդուն մարդոցմ մեկը Զիթունին եղավ:

«Ճինադադարին Պոլիս վերադառնալու պես՝ կպատմե ան՝ առաջին մտահոգությունու եղավ երթալ տեսնել զինքը: Բարեկամիս և իր բարեկամին դոկտ. Թորոգյանի արտոնաթուղթը սիրով շնորհվեցավ ինձի. — Ճիշդ մարդն ես, որմով պիտի կարենանք փորձել թե վարդապետը որոշ խոմքի մը դեմ վրշտացած է կսկապես՝ թե՝ ամեն մարդու թեղ շատ կսիրեր, գտենք. դուն գնա՞ այց մը տուր՝ տեսնենք թե ի՞նչ կերպով պիտի ընդունի», — ըստ մեծաարգ բժշկապետը՝ Հոգատար պահապան հրեշտակի մը բոլոր զեղուն զգացումներով:

Կնոջ հետ միասին զացինք, Շիշլիի Նօրիտ դե լա Պայք, Կոմիտասին՝ կարոտի ու երկար բաժանումի բերումով անհամբեր՝ այցի: Վերջին պահուն՝ կիսս սիրտ շըրավ խուցեն ներս մտնելու, մնաց պարտեզը: Ես՝ վերահսկողին առաջնորդությամբ բարձրացա այն հարկը, ուր էր գրադապետին խուցը: Մտաներս: Լայն ու երկար բազմոցի մը անկունը, պարտեզին վրա նայող պատուհանին կողմը, հանդարատիկ կծկտած նստած էր հե՞ք ռարեկամս... Զիս ընդունեց սիրով ու խոսեցանք երկարորեն»²³:

Զիթունի իր այդ այցը պատմեց այն ատեն²⁴, թեև թերթը, ուր իր հոդվածը լույս տեսավ, մաս մը հապաված էր անկե:

Զիթունի իր այդ հոդվածին մեջ կըսեր.

«Կարմիր օրերն անցած են, նոր կամքի արեն է ծագեր: Ամեն հայ՝ հայ՝ է կտրեր ու Հայաստան՝, Հայաստան» կնաքե: Բայց ո՞վ հարցուց ու փնտուց հայ մեծ երգահանը: Ինչո՞ւ ան մեր մեջ չէ: Ո՞ւր է Կոմիտաս փարդապետը: ի՞նչ կըսե, ի՞նչ է իր վիճակը, ու ի՞նչ պիտի ոլլա վաղը:

Երբ կգրեմ այս տողերը՝ աշքիս ու մտքիս առցեն են իր հրացայտ աշքերն ու սարսուղ գանդամորթը, իր փիլիսոփիա խոսքերն ու ցրված բառերը, — երբ այսօր իր սենյակն էի,

Շիշլիի հիվանդանոցին մեջ, Պուլկարիային՝ վերադարձես անմիջապես հետո:

Կոմիտաս վարդապետն իսպառ կորսված չէ, կհավտամ: Այդ մեծ կարը գեռ պիտի նշի Հայ Թնարին վրա: Միայն թե հայր փութա իր պարտքը կատարելու:

— Ես իմ ժողովուրդիս մեջ կուզեմ ըլլալ, — կիրկներ վարդապետը մեր տեսակցության ընթացքին:

Ժողովուրդը, որուն հետ, որուն մեջ և որուն համար եղած է Կոմիտաս, բայց որմեն կտրված է ան՝ երկար ատենե ի վեր: Հիվանդանոցին բանտ-միջավայրը՝ բռնաշապիկ մըն է վարդապետին միտքին: Այն միտքը՝ որ ազատ օդին ճախրանքովն է ընդայսներ ամեն ժամ:

— Իմ բանալինե՞րս կուզեմ, իմ տո՞ւնս ու գույքե՞րս կուզեմ: Իմ ժողովուրդիս մեջ կուզեմ լինել...

Ականջնս չեն հեռանար վարդապետին այս խոսքերը: Եվ ամենուն ականջին կուզեմ հընչեցնել զանոնք: Լսեի՞ք, գուք ամենքդ, որ կըսիրեք Կոմիտաս վարդապետը, ամե՞նքդ որ կճանչնար հայ ժողովուրդի մեծ դաշվար, մեծ երաժիշտն ու մեծ երգահանը:

Ժամ է որ սթափինք, խմբինք ու կատարենք մեր պարտքը, եթե չենք ուզեր դատապարտ մնալ վաղվան սերունդին առջև: Փըրկենք Կոմիտաս վարդապետը. Հանենք զինք իր այժմու բանտ-կյանքեն. բերենք մեր մեջ, ժողովրդի ծոցին մեջ: Եվ ասոր համար ահա, իմ առաջարկը: —

Քանի մը սրտակից մտերիմներ կիմրվինք, նյութական միջոցներ կգտնենք, անհրաժեշտ կարգադրություններ կընենք, «իր երգախումբին հետ մեկտեղ» հիվանդանոցը կերթանք, — «ժողովուրդը եկած է քեզ առնելու, վարդապետ», — կըսենք, ու վարդապետն առող-փառոք իր տունը կիոխագրենք:

Գերագույն փորձն է այս ձեզ, շատերու կարծիքով: — Կոմիտաս վարդապետը շկորսընելու հուսով:

«Հանդարատ ու մեղմ իր խոսակցութենենք քաջալերված՝ հարցուցի, թե գո՞հ է իրեն տրված սնունդին:

— Հապա՞ս, ի՞նչպես գո՞հ ըլլամ, — ըսակ դժողովով, — այն հացը որ իմ առջևս կդնեն՝ շունը լուտեր:

Հացին որակը ժողովուրդի մեջ ալ ուտվելիք չէր, ճիշդ է, պատերազմի շրջանին Պոլսումք: Ուստի փորձեցի շքմեղացնել հիվանդանոցը:

— Ո՞ւ, ո՞ւ, այդպես չէ. ես աշք ունիմ, կրտեսնեմ թե ի՞նչ կուտան ինձի, և ի՞նչ՝ իմ դրացիներուն: Խսկ իմ ոչ միայն հացը ուտվե-

լիք հաց չէ, այլ հաճախ հացին ու ապուրին մեջն մազի թելեր, շվանի կտորներ կելնեն...

Այս էր իր ոգեսր ու զառնացած պառախանը:

Հարցուցի թե՝ հիվանդանոցին, իր սենյակնեն և առասարակ իր նիսառւկացին դժոնելիք ի՞նչ ունի:

— Ինձի ոչ հիվանդանոցը պետք է, ոչ այստեղի կյանքը: Ես իմ տունս կուզեմ, իմ բնակարանս, իմ գրասեղանս ու գույքերս կուզեմ ինչո՞ւ համար գորգերը քաշեցին տարան իմ տունես. ո՞վ արտոնեց իրենց: Ո՞ւր են Փանոսի նկարները: Ես իմ բանալիներս կուզեմ: Իմ ժողովուրդիս զիս ինչո՞ւ զրկեցին: Ո՞ւր է իմ դաշնակս, ո՞ւր է իմ խոհարար վարպետս, ու՞ր ցրվեցին իմ աշակերտները»...

Ասոնք եղան իր կրկին ու կրկին ըսած ու պնդածները, — միշտ խորապես դառնացած՝ իր խնամատար անձերուն դեմ²³:

* * *

Զիթունին իրավունք ուներ: Պետք էր այդ մեծ ցուցը ընեինք:

Բժիշկներն էին որ մեզ վախցուցին: Ըսինթե մեծ հուզում մը կրնար ճակատագրական ըլլալ իրեն: Պետք չէր հավտայինք, ու քաջությունն ունենայինք զայն բերել նստեցնելու իր բնակարանը՝ հոն ուր ամենեն բնդնավոր տարիներն անցուցեր էր իր առաքելության, հոն ուրկե տարիներով շերմություն էր ծձեր հայկական Պոլիսը:

Ու հետո, եթե հոգեկան ցնցումին պիտի շտոկար, լավ էր որ մահանար փառավորման այդ պահուն՝ փոխանակ շարշարվելու ամբողջ 17 տարիներ ևս:

* * *

Զինադադարի այդ տարիներուն՝ քանիցս փորձեցի երթալ Կոմիտասին այցելել: Նույնիսկ մինչկ Շիշլի, բուժարանին մոտերը զացի: Բայց համարձակեցան ներս մտնել. վերշին պահուն սարսափ մը կեցուց զիս դրան սեմին: Հապա եթե վարդապետը պոռար երեսիս:

— Ինչո՞ւ բերիք նետեցիք՝ զիս հոս. ի՞նչ ըրած էի ես ձեզ:

XIII.—Ինչպես տարին զայն Փարիզ

Մեզմե ոչ մեկը համաձայն եղավ զայն Պոլիս պահել Այնպես կհուսալինք թե տեղափոխություն մը հոգեպես պիտի կազդուրի զայն: Պահ մը խորհվեցավ էջմիածին կամ երրուսաղեմ զրկել հեք վարդապետը. պայման-

²³ Տ. Ջիրունի, «Կոմիտասին հետ», էջ 96—97.

²⁴ «Ճակատամարտ», 1918 դեկտեմբեր, 29:

²⁵ Տ. Ջիրունի, «Կոմիտասին հետ», էջ 98:

ները նպաստավոր շէին սակայն ադ պահուն սույն վանքերուն մեջ, նվ այնուամենայնիվ զայն Պոլսեն հնացնել պիտք էր, ան իր մեջ հուզում ու զարհուրանք պիտի արթնցներ միշտ:

Փարիզ ամեննեն հարմար վայրը սեպվեցավ ի վերջո: Հնու իր շատ մը բարեկամները կային, ու բուժման համար ավելի ձեռնուու պայմաններ:

Կոմիտաս ոչ մեկ գինով չէր ուղեր սակայն հնուանալ իր բուժարաննեն:

Կդիմներ դարձյալ Կարո Ուշագլյանի հուշերուն:

«Օր մը ըսին ինծի թե վարդապետը Փարիզ պիտի փոխադրեն, Գրիգոր Կարապետյան (հետո Գուսան վարդապետ) իմացոց ինծի թե բժշ. Թորգոմյան կիափարի որ հետևյալ օր ներկա ըլլանք Շիշլիի հիվանդանոցը վարդապետը տեսնելու համար:

Նույն օրը ներկա եղանք հիվանդանոց. հոն գտանք դոկտ. Մազհար Օսմանը, թժիշկ թորգոմյանը, հունական հիվանդանոցի թժիշկը և Ազգ. հիվանդանոցի մտային հիվանդությանց մասնագետ բժշ. Ճեղայիրլյանը: Բացի բժ. Թորգոմյաննեն որ չէր ուղեր երեվալ վախնալով, որ հհուղի հիվանդը, մյուս երեր թժիշկները մտան վարդապետին սենյակը՝ քննելու և տեղեկագիր պատրաստելով Փարիզ փոխադրելու համար զինք: Նույն միջոցին վարդապետը ճաշի վրա էր: Ես և Գ. Կարապետյան սենյակին դրան առջին էինք: Ահա ինչ որ անցավ այդ միջոցին:

Հույն թժիշկը «պոնդուր, մոն փեր» ըսելով մոտեցաց վարդապետին: Վարդապետը զարմացած երեսը նայեցավ և ըսավ.

— Նե՞ իստելուրսեն, սե՞ թյուրքնեն պիլ-մե՞զ մի սին, նե՞ տեմե՞ պոնդուր. Մազհար պեյ, շունչլարը տիշարը շրգար. պենի բահար-սրգ էտիյուրլար... (ի՞նչ կուղես. թուրքերն չե՞ս գիտեր դուն. ինչ ըսել է «պոնդուր»: Մազհար պեյ, աս մարդիկը դուրս հանե, կը-նեղեն զիս):

Մոտեցավ բժ. Ճեղայիրլյանը և ըսավ.

— Բարե, վարդապետ, ինչպե՞ս եք:

— Ալ պետ տահա. սե՞ նե՞ իստերսին, պետամ, քի՞ մսին սե՞ (ահա մեկն ալ. դուն ի՞նչ կուղես, մարդ, ո՞վ ես դուն):

— Բժ. Ճեղայիրլյանն եմ, վարդապետ.

— Հա՞ ճեղալը իմիշ, շու ատամըն սուրարենա պագ (հա՞ պատժված է եղեր. սա մարդուն դեմքը նայե):

Եվ դիս տեսնելով դրան մեջ ըսավ հայերեն լեզվով.

— Գիտե՞ս մեր Կուտինա ճեղայիրլի մարդ կըսեինք երդ մը կար, ահա այս ան մարդըն է, ճեղայիրլի (իրապես ալ այդ անունով երդ մը կերպվեր մեր բաղարը):

Դառնալով գոկտ. Մազհար Օսմանին.

— Օսման պիյ, շու ատամլարը տիշարը վրգար պեն եմեմ էլենելիմ (սա մարդիկը դուրս հանե, ևս պիտի ճաշեմ):

Մազհար Օսման անուշ ժամանով մը կդիտեր վարդապետը և զայն հանդարտեցնելու խոսքեր կըսեր թժիշկները տեսան որ կարելի չէ ունեց բան ընել, ելան զորս, Գ. Կարապետյաննեն և ինձմեն խնդրելով մնալ իր մոտ և խոսակցության բռնվիլ: Մենք երկուք ներս մտանք, «Բարե վարդապետ» բահիք:

— Ի՞նչ կուղեք, դուրս ելեք, դու լուս, պուռաց:

— Ո՞ւ, վարդապետ, մենք դուրս չենք ելեքք, մենք թժիշկ չենք, եկանք ձեզի այցելություն տալու: Ես Պուկկարիա էի, նոր վերաբաժանության մասնագետ բռնվիլ: Մենք երկուք ստանք, «Բարե վարդապետ» բահիք:

Երկուք մեկ նստանք: Տեսավ որ դուրս չենք ելլեր.

— Է՞լ, լավ. ի՞նչ կուղեք ըսավ ժամանով:

— Ոչինչ, վարդապետ, եկանք ձեզ այցելություն տալու: Ի՞նչ աղվոր սենյակ ունիք: Եթե քովը ուրիշ պարապ սենյակ կա, ևս ալ պետք ունիմ, զրացի կըլլանք, ըսի:

Եվ սկսանք ասդիեն անդիեն խոսիլ: Վարդապետը միշտ թուրքերենով կպատասխաներ ինձի:

— Վարդապետ, ինչո՞ւ թուրքերն կխոսիք, ևս թուրքերն չեմ հասկնար, ըսի:

— Անպիտա՞ն, ձեր քաղաքին իւղուն թուրքերն է, հայերեն չեք խոսիր չէ:

— Է՞լ, լավ, բայց ես մոռցած եմ այդ լեզու...

— Ա՞լ հեռացեք, հանդիսաւ ձեկցեք զիս, ըսավ:

— Լավ, սակայն մենք աղվոր լուր մը ունիք ձեզի հաղորդելու, ըսի:

Զարմացած նայեցավ:

— Փարիզ միջազգային երաժշտական համաժողով տեղի պիտի ունենա եղեր. Ա. Չոպանյան գրած է որ ձեզի Փարիզ գրկեն այդ ժողովին մասնակցելու համար. ահա անոր համար եկանք ձեղ մոտ. պատրաստվեցներ վարդապետ, մոտ օրեն պիտի մեկնիք:

— Ես հոսկ դուրս չեմ ելլեր. ով որ բերավ զիս հոս, ան կրնա հանել դուրս:

— Լավ, կգտնենք այդ մարդը ով որ է:

— (Բարկացած) Դուն լավ գիտես թե ո՞վ է այդ մարդը. կհիշե՞ս, գիշեր մը իմ տունը մնացիր իբրև հյուր... ո՞ւ են տանս բանալիները. ա՞խ, ավաղակներ, պոռաց:

— Վարդապետ, ձեր տանը բանալիները ձեր քովը պետք է ըլլան. ինձի ինչո՞ւ կհարցընեք:

— Գնացե՞ք, դուրս ելեք դուրս, պոռաց կրկին:

Մենք շվարած մնացինք: Զգացի որ այս խեղճ մարդը որբա՞ն անիրավորեն տակն ու

վրա ըրած են, իր տունն ալ գույքերն ալ ցրվելով և զինք հոս բերելով:

Տեսանք որ, վարդապետը հաճախ կվախնա հայերեն խոսելե, գիտնալով թե թրքական հաստատվելան մեջ է, Երկրորդ՝ հիշողությունը տեղն է. ահա թե ի՞նչպես կ'իշեր երկու տարի առաջ, գիշեր մը իր մոտ հյուր մնալու նվազագույնը հետևյալ օրն սկսկ զինք հիվանդանոց փոխադրած են, նեթադրած է որ ես եմ զինք հոս փոխադրելուն պատճառը. Խեղճ վարդապետը իր տունը կփնտուե, կարծելով որ կմնա նախակին վիճակին մեջ...

Մենք գուրս ելանք հուզված և մտածկու, բժիշկներուն պատմեցինք տեղի ունեցած խոսակցությունը:

Քանի մը օր ետքը Ա. Հարենց վարդապետը հիվանդանոցին առնելով, հիվանդապահի մը ընկերակցությամբ տարած են ոռմանական շոգենավ մը, Փարիզ դրկելու համար:

Շոգենավին վրա, իր աշակերտներեն խումբ մը որ ողջերթի էին գացած երգած են, հոսալով որ վարդապետը կսթափի. սակայն ան երեսը հովին դարձուցած՝ կեցած է առանց բառ մը արտասանելուա²⁶:

Բժիշկ Վ. Թորգոմյան 1919 մարտ 17-ին Պոլսեն կարե Փարիզ՝ Արշակ Չոպանյանին.

«Վաղը կամ մյուս օր մեր Կոմիտաս վարդապետը ճամբար հաննենք գեպի այդտեղ. հետը երկու ընկեր ունի. Հոդ հասնելուն՝ հարկավ պետք եղածը պիտի ընեք շուտով՝ զինքը Փարիզին գուրս Maisons de Santé-ի մը մեջ զնելու պետք եղած ծախքերը ապահոված է հոս. 1500 ոսկի դրամ կա, այս տարվան համար կրավե, մնացյալի մասին ալ կխորհվի: Երկու տարի է որ ինքը այս վիճակին մեջ է. ամենքս՝ ըստ իրեն, թշնամի նիք, մանավանդ ես, և ինձ հետ բոլոր բժիշկները կամ բժիշկ անունը կրողները, վիճակը գեպի լավն է թեև, բայց դեռ շատ պետք ունի խնամքի, ինչ որ այստեղ կարելի չէ: Զինքը ցարդ դարմանել տվինք Շիշլիի Hôpital de la Paix-ի մեջ, բայց զղագարի մը համար ինչ որ պետք է շկա հոն. պետք է զբաղիլ հետը, աշխատիլ զաղագարները հեղաշրջել, պարտեզ հանել, պտույտներ ընել տալ, և այլն. Հիվանդանոցին մեջ հույն բժիշկ մը կար, շատ լավ, իրեն հետ կըբաղեր միշտ. բայց հինգ ամիս առաջ տիրիս հիվանդութենեն բռնվեցավ իսեղճը, հետո զղագարեցավ և ցայժմ կմնա այդ վիճակին մեջ:

Պիտի խնդրեմ որ վարդապետը դոկտ. Քոլին հետ ցույց տրվի Professeur Gilbert-Ballet-ին և ասոնց հարմար դատած հիվանդանոցին մեջ խնամքի: Չորս օր առաջ խորհրդակցություն մը ըրինք, Հոպիտ դե լա Պայք-ի բժիշկապետին, հույներու և հայոց հիվանդանոցին հիմարարությունը հետ և տե-

ղեկագիր մը ստորագրվեցավ. այդ տեղեկագիրը ես ալ ստորագրած եմ. կաղաչեմ որ դոկտ. Քոլուանը հոգկին զրադի վարդապետով, ինչպես զբաղեցա ես»²⁷:

Պոլիս իր պարտքը կատարած կսեպեր: Ավելի մեծ գիտնականներու կլրկեր հեք վարդապետը՝ կարծելով որ անոնք պիտի հաջողին վերստին լույս բերել անոր խավարած հոգվույն մեջ:

Ու 1919 մարտ 19-ին Պոլիս շոգենավ դրավ զայն:

Քաջություն չունեցա ներկա ըլլալու այն զարհուրելի պատկերին որ տեղի պիտի ունենար շոգենավին վրա երբ Կոմիտասը ձամբու զնեին բռնի: Իրեն հետ կճամբորդեին երկու հայ երիտասարդներ. անոնք հիվանդին վրա հսկելու պաշտոնն ունեին: Կոմիտասը կինուացնեին այսպես բռնությամբ ինը տարվան իր հիշատակներեն, —իր տեսիլքներեն, իր տքնութենեն, իր հաղթանակներեն, ու այն ահավոր տվայտանքեն՝ զոր կրեր էր զբեթե շորս տարի, 1915 ապրիլ 24-ի այն սե գիշերեն ի վեր՝ որ իր Գողգոթայի ճամբան բացեր էր: Որովհետև ինչ ալ եղած ըլլալին խորվի պահերը որոնք պիտի խորտակեին հետո իր հոգին, ողբերգությունը այդ սարսափելի գիշերեն սկսավ, այն քստմնելի վայրկյանեն երբ հայ ժողովուրդի դահճճը անոր լավագույն ծաղիկները ժողովեց նահատակության տանելի առաջ զայն:

Կոմիտաս զոհն է, ամենեն առաջ, ցեղի մը մոլեգնության՝ որ շղթայացերը ըրած էր իր բոլոր բնագները չքացնելու համար իր հարեւկանը զինքը գլած ըլլալու աններելի մեղքին համար:

* * *

Այստեղ շավարտիր սակայն Գողգոթան: Զարշարանքի ուրիշ պասնը վեց տարիներ պետք եղան որպեսպի Կոմիտաս ալքերը ցմիշա փակե աշխարհին:

Զայն պանթեռն տանելի առաջ այդ տարին ալ պետք է կցենք իր Գողգոթային: Այդ տարիներուն մենք հետևեր էինք արդեն հեռվեն, բայց միշտ մեզ մոտ զգալով մեծ վարդապետը՝ որուն մոտն էինք եղեր իր կյանքին ամենեն ճակատագրական հանգրվանին, ինչպես այն օրերուն երբ ան հաղթանակ ստեղծեց իրեն և հայ ժողովուրդին համար, նույնպես այն պահերուն՝ երբ դահճճը փառքի այդ շրջանին կցեց եղերական սե տարիները...

²⁷ Դոկտ. Վահրամ Հ. Թորգոմյան, «Հուշատերեն», «Վեմ», 1938, թիվ 1, էջ 71:

(Հարունակելի)

²⁶ «Երածանի», էջ 77—80:

Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒ «ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ»-Ը*

Լամբրոնացին եկեղեցական արարողություններն ու ծեսերը չի կարում ժամանակից, երա պահանջներից ու ժողովրդի ճաշակից: Նա ձգտում է եկեղեցին դարձնել հետաքրքիր և կենտրոնակ: Եկեղեցական և քաղաքական գործունեության համամակրներով նա էլ Վկասակրի պես միշտ շիման մեջ էր քրիստոնյա տարրեր եկեղեցիների հետ, լավ ծանոր էր այդ եկեղեցիների պատույան ու ծեսերին: Տարտնում, Կ. Պոլոսում և որիշ տեղերում նա շատ անգամ էր տեսել հովանական և լատինական պատարագների փառն ու շքեղությունը: Համեմատելով սրանք հայ եկեղեցու ժամերգության և առանձնապես պատարագի հետ, նա վրեպեց բարեկիրդություններ մոցնել հայ եկեղեցում: Եթե որոշ բարեկարգություններ չըհաջողվեն անցկացնել Արևելյան Հպատակի և Կիլիկիայի եկեղեցիներում, նա մտադիր էր մի քանի բարեկիրդություններ մոցնել գոնեն Տարտնի թեմի եկեղեցիներում, որի առաջնորդն էր ինքը: Խճանատիքրան հաւականալի է, որ անշափ հծվար էր այդպիսի համարձակ և պատասխանառու ծեմարկում: Նախազգացով այդ՝ նա ստում է: «Արդ, նախ առաջին ի սկզբան աղաչեմ զամենեսեան գրովն Քրիստոսի Յիսուսի, մի՛ որ համարեսցի զիս անզգամ կամ բժիշկ մեղանչական առ ի զայլ դատելով զանձն արդարացուանել... և մի լորժամ լսէք զդիմումներով բանից պահանջու անկարգութեան

յայտնիչ, ի ներքոյ նոցին կացեալ զընդդեմ յառնելն ախորժեք՝ իբր թէ անձանց լինիք վրէժմանդիր. քանզի վրէժմանդիր ամեննցուն մեզ այս է՝ որ զօրէնս Աստուծոյ փափաքէ նորոգել և ոչ այն, որ արտաքին արկածիցն լինի շատագով»³⁶:

Բայց և այնպես Լամբրոնացին ոչ վախեցալ և ո՞չ էլ վարանեց: Ահա այս հպատակով էլ գրված է գիրքը. «...կարևոր համարեցայ լօգուս եղբարց հակառակ շատոք առ խորհրդոյ քննութիւն գնալ... թերևս գունա ակներն տեսեալ ճգեցիմք առ ի փափաք ըդապոյն. և մի ոք զմեզ ապանեսցէ տեսեալ մինչև ի շնչին իրաց իշեալ ի քննութիւն, այլ զպատճառն ուսցի, զի վասն ալսորիկ քննեցաք զփոքունս ընդ մեծամեծացն, և խորհրդանեցաք զմանունսն, որպէսզի մի նորին որպէս հարևանից ինչ իրս արհամարեսցին, և մեք գոցովք պարտական դատաստանի ասողին»³⁷: Լամբրոնացին հպատացած էր, որ իր այս գիրքը անպայման քննության կրտպի եպիսկոպոսական ժողովում և կաթողիկոսարանում, ապա լրացումներով կամ լրճատումներով կիաստառվի և կթուլատրովի գրքում նշված բարեկիրդումները կիրառելու հայ եկեղեցում: Բայց այդպես չեղավ: Ահա այս էր պատճառը, որ Լամբրոնացու սպասածին հակառակ, երա գիրքը քննության շառնվեց ոչ մի տեղ: Եվ ոչ միայն շքննվեց, եռվճիսկ ոչ ոք չկարդաց այն, այլ տարիներ շարտնակ մնաց «արկղներում»:

* Տարտնակաված «Հշմածին» ամսագրի 1968 թ.
№ Ժ-ից:

³⁶ Անդ, էջ 23—24:

³⁷ Անդ, էջ 235:

Այդ անարդար վերաբերմունքի դեմ դատականը է բողոքում Համբրոնացին. «Մի անգամ և երկից համի զայն յատեան և ի ժողովս եպիսկոպոսաց և իշխանաց, և ոչ եղև պարապումն գոնք ընթերցման կամ ունկնդիթեան»³⁸: Այս անտարբերության դեմ Համբրոնացին բողոքել է հան Լոռու թագավորին. «Բանօքի այլ անգամ եղև այս հարկու և խնդրեցիք ի մեջ բան՝ որ առ մեզ ուղղութեան վկայ, տուաք գրոց սրբոց վկայութեամբ, որ զամենացի հակառակողի ի հաւանութիւն նուամբ ի սիրելն զուղութիւնն, և ծանր եղև ձեզ ընթեռնուզն կամ այլոց զեյն ցուցանել»³⁹: Եվ պայպես Համբրոնացու «Պատարագի մեկնութիւնը» չընդունվեց և զգանահատվեց ժամանակակիցների կողմից: Սակայն դեռ մի դար էլ չէր անցել, երբ հետագա սերունդը հիմնուեքով և երախտագիտությամբ ընդունեց այդ բովանդակայից ուսումնափրությունը, տարածվեց բազմաթիվ ընդորինակումներով: Համբրոնացուն քաջ ծանոթ են եղել պատարագի հեղինակների (Բարսեղի, Նազիկազանցու, Խգևատիսի, Աթանասի, Ուկերերանի) գործերը, որոնցից հայ օգտվել է: Սակայն, հայկական պատարագի պատմությունը լուսաբանելու տեսակետից Համբրոնացու «մեկնութիւնը» մի ինքնուրույն և անզուգական հոչշարձան է, որը պաժառ կերպով ցուց է տախու հայկական պատարագի անցած ուղին ու նորա վիճակը 12-րդ դարեւնիքում: Այստեղ հիմնավոր և շատ արժեքավոր տեղեկություններ է տղրվում, որ մեր պատարագի կարգավորությունը եղել է տակավին 4-րդ դարում՝ Լուսավորչի ժամանակ, ապա այս վերակարգավորվել է Ներսես Մեծի օրով, Ուկերերանի պատարագի առաջ: Այսուհետև 5-րդ դարում հայոց պատարագը առաջ: Այսուհետև ներկա պատարագի ավելի ճշգրտվեց, լայցվեց:

Հովհաննես Արքիշեցին իր «Պատարագի համառուս մեկնութիւն» գրքում գրում է. «ոչ եթէ յաղագ միոյ անձին և եթ պատարագի Քրիստոս, այլև, վասն ամենացն աշխարհի...»⁴⁰: Այսուհետև, գնահատելով Համբրոնացու մեկնության բազմակողմանիությունն ու խորությունը, ասում է. «Մեծն Խոսրով՝ հայոց Գրիգորի Նարեկացոյն հային և Ներսէս վերատեսուչն Տարտունի յետոյ, ընդառնակ և պայծառ քննութեամբ ետուն մեզ զմեկնութիւն պատարագիս»⁴¹: Ասացինք, որ

³⁸ Կաթ. Գ. Հովհաննես, Յիշատակարանը, Ա., էջ 467:

³⁹ Նամականի, Վեճետիկ, 1865, էջ 210:

⁴⁰ Հով. Արքիշեցի, Մեկնութիւն պատարագի, Եշմածին, 1860, էջ 15:

⁴¹ Անո, էջ 7:

Համբրոնացին ունեցավ շատ հետևողմեր: Դեռ մի դար չանցած երևացին այդ կարգի որիշ գործեր, ինչպես՝ Հովհանն Արքիշեցու, Մովսես Երզնկացու, Հովհաննեսն Պլուդ վարդապետի և որիշների կատարած մեկնությունները: Սակայն սրացից և ոչ մենք էլ չունի Տարտունի եպիսկոպոսի «Գերագոյն Յիշտարարություն ըղանաօք և մաղթաօք լալովք, քան զորս չիք թերևս ազնագոյն և աստուածակագոյն ասացուած ի լեզու մեր»⁴²: Հայոց պատարագին վերաբերող այս հակիրճ տեսությունից հետո, այժմ ծանոթանակը Համբրոնացու այս գրքի բովանդակությանը:

Գիրքը բաղկացած է երկու ընդարձակ բաժիններից: Առաջին բաժնում հայ եկեղեցուն վերաբերող խորհրդադություններն ու քննարանություններն են, իսկ երկրորդում՝ պատարագի մեկնությունը և «Հարցաթեսութիւններ»: Գրքի մեծ մասը հատկացված է պատարագի համակողմանի մեկնությամբ: Նախքան բուն նպատակին՝ պատարագի մեկնության անցնելը, Համբրոնացին խորհրդածության եղանակով, երակեալ ունենալով Հին և Նոր կոտականակները և եկեղեցական հայրերի գործերը, վեր է հանում հայ եկեղեցու ժամանակագրության և ժամանացության մեջ վերջին դարերում մուսք գործած խորթ ծեւերն ու արարողությունները, հզում է դրանց պատճառները, սպան անում համապատասխան հետևողությունները և ստաշարկությունները: Գրքի մկրում խորհրդածելով հայատի, դայանակքի, Քրիստոս Մարտեղության և սուրբ Երրորդության մասին, հատկապես ընդգծում է Քրիստոսի հասեղության խորհուրդը և կապում պատարագի խորհրդի հետ՝ առաջապի հետևյալ խոսքեցով. «Արինն Յիշտի որ ի ծեռն հոգին մատոյց զանձն անարա պատարագի Աստուծոյ, սրբեսցէ զիմոնց մուսց ձերոց և մտուելուի գործոց ձերոց պաշտել զԱստուած կենդանի»⁴³: «Խորհրդածութիւնն» մասում ցուց է տրվում մի կողմից եկեղեցուն մուտք գործած աղավաղումներն ու խափանություններ, իսկ մյուս կողմից՝ ժամանակակի քահանաների, անգիտություննը, որոնք իրք ժամանացության մեջ առաջնորդվում են «ոչ օրինօքն Աստուծոյ, այլ զաւանութեամբ ծերոցն»⁴⁴: Եկեղեցու մուտք գործած անկարգությունները մեկնիչը կապում է ժամանակի և կյանքի անբարենպաստ, վասպայմանների հետ և դրանցով էլ բացալում. «Այսպէս է տեսանել և մերս անբարի ժամանակ, աւանդութեանցն զրազում

⁴² Պ. Արքան, Միտուան, էջ 86:

⁴³ Պատ. մեկնութիւն, էջ 20:

⁴⁴ Անո, էջ 23:

անբերելի վրէմիսնդիրս, և օրինացն և ոչ
բռա քննողս»⁴⁵:

Լամբրոնացին պատարագի մեկնությունը
գրել է «վաճական միարան եղբայրների»
խնդրանքով և ոչ թե անձնական շահերի
կամ փառամոլության համար, այլ եղելով
ճշնարության և ազգային եկեղեցու շահե-
րից. «Աղաջեմ զամենեաւան... մի որ հա-
մարեցից զիս անզգամ կամ բժիշկ մեղա-
չական առ ի զայլ դատելով զանձն արդա-
րացնուանել, այլ զիշանել ծեզ առ իս տիա-
րութիւն և մանկական իմաստ, որ ի սիրո;
ամենեցուն շարժեալ՝ եկի խասպիս յան-
դրգնութիւն, որ իմս նուասութեան անմարք-
էր ծերութեաց և կատարելոց հասակա ու-
սուցիչ լինել»⁴⁶: Ապա զգուշացնում է միա-
րան եղբայրներին և բոլոր հոգևորականնե-
րին այն բանի համար, որ եթե ինըը պա-
տարագի մեկնության մեջ անմասն ու իմաս-
թանադատի ումանց, թող ոչ որ չզարմանան,
որովհետև ամեն ինչ ասվելու է բարեկամա-
րար, բայց խիստ և ճիշտ. «Մի կշտամբե-
ցաց յումերէ վասն որոնելոյ զաստանաշա-
կան սերմանեալ անկարգութիւնս... յաշա-
րուոր և տգէւոր զիեզ ոչ եղծեալ օրինաց
նորոգիչ համարին, այլ նոր ասենդութեան
մուծիչը... վասն այսրիկ ախործէ բան
բժշկութեան՝ զի խոր խոցուտեալսն կնկճելի
դեղովք ասողացուցանել, և յիմարական
թմբրութեան զարուցանել...»⁴⁷: Իր սուր
քննադատությունն պատկերավիր եղանա-
կով համեմատում է բժշկության նետ, թե
ինչպես երբ վիրահատը կորում կամ յա-
րանում է հիվանդի չարորակ խոցը, այդ ժա-
մանակ հիվանդը սուր ցավեր է զգում և նե-
տու հանգստանում: Ինչպես բուժվող հիվան-
դը իրեն ցավ պատճառող, բայց բուժող
բժշկին իրեն թշնամի չի համարում, այդպես
էլ բացերը նշող, ցավ պատճառող անսաշա-
քննադատին չպետք է թշնամի համարել⁴⁸:
Խոչ երանք, որուիք արատները վերացնելու
և ցավերը բուժելու ազնիվ նպատակի հշա-
նակությունը չեն համանում, մթագնում են
երանց միտքն ու խիդճ, այդպիսիները,
տրտնջում է Լամբրոնացին, փոխանակ գնա-
հաստելու հոգերով խոսք արժեքը «յորքին
ի մէնց»⁴⁹: Ավանդամոլությունն և տգիտու-
թյունն հասկացությունները Լամբրոնացու
մոտ համասրաջափ վտանգավոր են, բա-
նի որ այդ ախտերով տառապող մարդիկ ոչ
միայն մամանակի ու կյանքի նետ համբն-
թաց չեն կարող բայլել, այլև խանգարում են

նրանց, ովքեր անսպառվ ժամանակի և կրան-
քի ձայնը, ուզում են ասաց գնալ: Ավանդա-
մոլներն ու տգետները,—դաստիմ է Լամբրո-
նացին,—ճգնում են լուսամիտ հապացքներ
ունեցող մարդկանց նովնիսկ մեղադրել՝
զրպարտելով ս. Գրքի ու հայրենի ավանդ-
ները անտեսելու և իր կորորեն որիշ
ազգերին հետևելու մեջ: Սերլացներով այս
կարգի նեղմիսն մտածողներին, նա ցոյց է
տալիս, որ ինքը ոչ թե խախտում կամ աշ-
քայտ է անում ս. Գրքի ասածներն ու ազ-
գային ավանդությունները, այլ կանգնել է
Հին ու Նոր կոտակարանների դրույթների և
հայրենի իմաստալից ավանդների սկզ-
բութերի վրա. «Մի փոխեսն զամ-
մանս, զոր եղիս հարքն քո, և որ քա-
կէ զցանկ, հարցէ զնա օճ, բայց ասա՝
զո՞րս խոսովանիս դու հարս քո, եթէ
զուարեալսն և զիայրապետուն, որը աստ-
ուածաշնչ բանիր դեռ ևս կենդանի են ի
միջի մերում, և առ ամենայն ճշմարտութիւն
առաջնորդեն, և ես եմ նոցա ջատագով, առ
ի նոցանէ վարժեալ և աշակերտեալ»⁵⁰: Կի-
լիկիայում կատարվող հասարակական-քա-
ղաքական իրաշարդությունները, խաչա-
կրաց արշավանքները, շիունն ու կապր եվ-
րոպական երկրների հետ, զարգացած քա-
ղաքների շվայտ կյանքը, աշխարհիկ տրա-
մադրությունները, սրանցից ամեն մեկն իր
ձեռով ու չափով նույնպես նպատել է հա-
վատի ու բարեկապաշտության թուղարմամբ:
Ըստ Լամբրոնացու, որեւնն եկեղեցական
կարգանցությունները ունեցել են իրենց
ներքին և արտաքին պատճառները. «Բուռն
հարցուք նաև զժամանակական առկայաց-
եալ անկարգութեանց»⁵¹:

Ներկայացներով և վերլուծերով եկեղեցու,
հավատի թուղարման փաստերն ու դրանց
պատճառները, Լամբրոնացին առաջարկում
է միջոցներ, որոնց գործադրումով պիտի վե-
րականգնի հայ եկեղեցու խախտված կար-
գը: Այդ ամենից հետո նա դնում է մի ընդ-
հանուր հարց ևս ինչ՞ն, թէ՛ նոր ուղիղ գնալ,
այսինքն՝ հետևել Լուսավորչի դրած կարգ
ու կանոնին, թէ՛ շարունակել աղավաղում-
ների նոր ուղին: Այս սկզբունքային հարցին
նա պատասխանում է այսպես: «Բարիոք
համարիմ զրաբեկիշատակացն (Լուսավոր-
չի, Ներսէսի և Սահակի դրած կարգերը—Գ.
Հ.) նախապատուել զօրինադրութիւն»⁵²:
Ինչպես հավատի և կարգապահույթան ան-
կոմքը կապում է ժամանակի ու կյանքի նետ,
այդպես էլ պատմականորեն ցոյց է տալիս,
թէ՞ ո՞ր աղավաղումը կամ փոփոխությունը
ե՞րբ և ի՞նչ պատճառներով է կատարվել:

⁴⁵ Անդ, էջ 23:

⁴⁶ Անդ, էջ 23:

⁴⁷ Անդ, էջ 24:

⁴⁸ Անդ, էջ 24—25:

⁴⁹ Անդ, էջ 25:

⁵⁰ Անդ, էջ 25:

⁵¹ Անդ, էջ 25:

⁵² Անդ, էջ 26:

Ամենից առաջ, որպես փաստ վերցնում է եկեղեցիներին կից ժամատները, որոնք քրիստոնեության առաջին դարերում, ապա լուսավորչի և Ներսեսի ժամանակներում չեն եղել, այլ շատ հետո են կառուցվել: Եղել է միայն եկեղեցին մի շենք, մի աղոթատուն, որտեղ միասին են աղոթել հոգևորակաները և ժամանակու հայտացյալները. «Յարձանացեալ խորանացն ոք կան մինչև ցայսօր հաստատուն, և ոչ ունին առընթեր ժամանուն... ասէ պատմութիւնն. նաև թագառոքն Բագրատունեաց, և որ առ նոքօր հայաբետք՝ ընդ նոյն գնացին շահին՝ եկեղեցին միայն շինեալ տուն աղօթից»⁵³: Այստեղ էլ ցոյց է տրվում այս նորածն թերության պատմական պատճառները: Երբ այլ ազգիները ներխուժում են Հայաստան և երկրին տիրապետում, հայ հասարակական կյանքի հետ միաժամանակ շատ է տուժում նաև հայ եկեղեցին: Տեղից-տեղ գաղթող հայերը չունեն մշտական ապահով կյանք. այդպիսի վիճակում էր նաև եկեղեցին: Ամեն անգամ, այն էլ այդպիսի պայմաններում, հնարավոր չէր կառուցել երբեմնի մեծ ու վեր եկեղեցիների հնան շենքեր, որտեղ կարողաւային տեղափորվել հարյուրներով ժամավորները: Ստիպակած շինում էին ժամանակավոր, փոքրիկ, անշուր եկեղեցիներ՝ ժամատներով, որպեսզի ժամավորները արարողությունների ժամանակ բրուր տեղափորվեին: Սեղովկների արշավանքներից փախչող հայերի մեծ մասը տեղափորվեց հունական հողերում, առանձնապես Կիլիկիայում, որտեղ հոյներն արդեն վաղուց ունեին եկեղեցիները: Տեղացիները հայերին չին թողնում իրենց եկեղեցում աղոթելու. հավերը հարկադրված էին ունենալ իրենց սեփական, թեպետ փոքր ու անշուր եկեղեցին: Ահա դրա համար էլ այդ գաղթական հայերը թեկուզ դժվարությամբ, սակայն «շինեցին միայն ըստ ժամանակին այս տոյից մատրուն փոքրկուն... տկարանայր եկեղեցին ամփոփել զնոսա և ի հարկէ շինեցին աղըները զոտունա»⁵⁴: Այս կապակցությամբ նախատելով հոյներին, որ թուզ չեն տվել «թափառական» հայերին հաճախելու իրենց եկեղեցին, մինչև նոր եկեղեցիներ շինելը: Վերոհիշյալ ժամատները անշուր, աղքատ և անհարմար շենքեր են եղել, որոնք բոլորովին չեն նմանվել հայ եկեղեցու կառուցվածքին ու ոճին: Դրանք էլ իրենց անհաջակությամբ, աղքատությամբ մեծ վնաս են տվել ժամանացության ու բարեպաշտությանը: Զարմանում է մեկնիչը, որ

այդ անշուր ժամատները փոխանակ վերացնելու, տարեցտարի բազմացնում են. «Յաղթաց հետութիւն ճշմարիս օրինացն, և նկան ընդ ամենավան տեղիս շինել զայս տուն՝ իբր առանձ զգուշով ան տպով կարծիս. և հարկատրապէս ձգեցին զամանակն արտաք ամենայն բարեկանութեան»⁵⁵: Խոհ որոնք են այդ ժամատներում աղոթելու փառ հետևանքները, ըստ Լամբրոնացու՝ ա) աղոթը պետք է կատարել միայն եկեղեցու սուրբ սեղանի և քահանայի առաջ, այնինչ ժամատունը եկեղեցուց անջատ է. բ) դրսում աղոթելիս ժամավորներն անուշադիր կիմեն, կտոսեն իրար մետ, որոնց մոքերը ոչ թե դեպի երկինք, այլ դեպի երկիր են ողղվում. գ) դրս լինելով եկեղեցուց, ժամավորը չի լսում պատարագի քաղցրաձայն երգերն ու աղոթքները, որոնք մարդու հոգին հմայում են և ազնվացնում. դ) քահանաները կտրվելով ժողովրդից, ըսդունելով, որ ամեն տեղ կարելի է աղոթել, շատ անզամ եկեղեցի չեն գնում և եկեղեցական արարողությունները կատարում են իրենց տանը, շատ հաճախ մահճակալների վրա պատկան դրությամբ:

Դատապարտելով այս օտարամուս, վճարակար տվյալությունը, ժողովրդին եկեղեցուց դուրս աղոթել տալը, Լամբրոնացին բացարում է, որ հայ եկեղեցին «ամենեցու է այս տեղի, ամենեցուն պարս է ի մաս աղօթել»: Միանգամայն անթուլլատրելի և ամեներելի օրինազանցություն է «գեկեղեցիս քրիստոնեից ընդդեմ փակել»: Ասսուն տունը «համարձակելի է մտանել ամենեցուն... մեծամեծաց և փոքրունց, չարագործաց և բարեպաշտից... իսկ եղիկելի որ հակառակ այս լինելով... միայն աւանդութեանց սովորութեանց լինի շատագով»⁵⁶: Վերջապես այս աղիթով դրսերվում է Լամբրոնացու ոչ միայն դեպի եկեղեցին ունեցած ջերմ սերը, այլև մարդասիրությունը: Նա գտնում է, որ եկեղեցին միաժամանակ առաքինության, բարեկրթության և դաստիարակության մի վայր է, որ պիտի գնան ոչ միայն հավատացյալները, հշխանելերն ու մեծերը, այլև ամեն կարգի մարդիկ, նոյնիսկ անհավատներն ու հանցավորները: Անհրաժեշտ է սրանց «ժողովել ամենեցուն յեկեղեցին՝ անհաւատից և հաւատացելոց, մեղադրաց և արդարոց, սրբոց և պղծոց, չարագործաց և բարեպաշտից»⁵⁷: Հասկանալի է, որ այսպիսի համարձակ և մարդասիրական լայնախորհության համար այն ժամանակներում բարացած մտքի տեր որոշ հո-

⁵³ Անդ, էջ 26:

⁵⁴ Անդ, էջ 30.

⁵⁵ Անդ, էջ 30:

⁵⁶ Անդ, էջ 33:

⁵⁷ Անդ, էջ 34—35:

գեվորականներ պիտի հարձակվեին Լամբրոնցու վրա և մեղադրեին նրան: Այսպիսի մեղադրանքները կանխելու և նախապես ինքնապաշտպանության դիմելու նպատակով, նա գրում է. «Եթ թէ հետ յանդմուցին համարիս զասացեապ, առ զգիրս նորա (խոսքը Դիոնիսիոս Արիսպագացու գրքի մասին է—Գ. Հ.) ընթերցիր և գտցես, զի ոչ լուծանեն պատուիրանացն Աստուծոյ»⁵⁸: Հայ եկեղեցու դերը նույնացնելու, աղավաղելու գործում ժողովրդի անազատ, անապահով պայմաններից բացի պակաս բացասական դեր չեն խաղացել իրենց աստիճանին անարժան որոշ հայ հոգևորականներ. «Ինձ թոփի թէ յանձնաստ առաջնորդաց և ի տգէտ վերակացուաց, որք թշուառական մոռ առաք զայցելութիւն եպիսկոպոսութեան»⁵⁹ և եկեղեցին հասցրիք այդ ողբախի վիճակին,—ասում է Լամբրոնացին: Այդպիսի անարժան առաջնորդներն ու վերակացները հայ եկեղեցին համարել են «որպէս զմարմնական իշխանութիւն, շահավաճառ համարելով զաստուածապաշտութիւնն, անքարական ագահութեամբ արծաթոյ և փառաց, որոց հարկ էր զախտ մտացն ագեցուցանելով անփոյթ առնել եղծման եկեղեցական օրինաց... մանաւանդ ի բազմաց, որք ամենիր են իմաստից և ի բարորան մոլորեալս և նորաձեռնութիւն թոփ հարցն սրբոց հրամանացն հետևութիւն»⁶⁰: Այդ թերություններից հետո Լամբրոնացին հետևայլ գլխում կանա է առնում նորամուտ մյուս ձևերի վրա, որոնք սուսկել են եկեղեցի սեղուկների արշավանքների ժամանակ, երբ հայերը կորցրեցին իրենց պետականությունը և հայրապետական Սլոռոք դարձավ թափառական: Այդ նորամուտ վտանգավոր ձևերից մեկն էլ այն է, որ գրեթե շնչվեց տարբերությունը արեղաների և քահանաների միջև: Մեկնության այս գլխում ընդգծվում է, որ շատ մեծ է այդ երկու դասի տարբերությունը և՝ աստիճանի, և պարտականությունների տեսակատից: «Վասն զի քահանայութիւն նախապատվութիւն է և երեցութիւն ի մէջ ժողովրդեանն, իսկ կրօնառորութիւն... կարգ խոնարհութեան և լույսեան և ոչ իշխանութեան»⁶¹: Նախ և առաջ քահանայացուն պետք է ունենա հասուն տարիք, ամուսնացած և տեղյակ հայ եկեղեցու խորհուրդներին, ժամակարգությանը և արարողություններին: Ավելին. ամեն պատահական մարդու քահանա չեն ձեռնադրում: Նրան պետք է ընտրի և առաջնորդի հոգևոր հա-

մայնքը, հաստատի և ձեռնադրի եպիսկոպոսը՝ եթե նա իր վարքով ու պատրաստվածությանը համապատասխան է ըստ եկեղեցական կանոնների: Ուրեմն, իր պատինի, դիրքով ու կոչումով քահանան շատ բարձր է արեղայից, որք «փոքր և ետին է կարգ կրօնառորութեան քան զարաւիրականութեան»⁶²: Բացի այդ, քահանան պատասխանատու է իր հոգևոր հոտի բարեպաշտության և դաստիարակության համար, մինչդեռ արեղան այդպիսի պարտականություններից ազատ է: Այնինչ մեր ժամանակներում,—ասում է Լամբրոնացին,—բոլորովին այլ կերպ են նայում քահանայի և արեղայի վրա: Փոխանակ ժողովրդին ապահովվելու բանիմաց քահանաներով և վերջիններին միշոցով բարեպաշտություն բարողելու, բազմացել են արեղանները, որոնք հավատացյալների մեջ այն անելիքն ու դերը չունեն, ինչ որ քահանաները: Առաջ, սակայն, այդպես չի եղել: Այս սխալը մասամբ էլ կատարվել է եպիսկոպոսների, առաջնորդների անփոյթության, անքարեխնանության պատճառով. «Զի ամեններեան նորա ի վանորալ և ի մենաստան կրօնառոր բազմացուցանեն... իսկ քահանայութեան և սարկաւագութեան պատույ՝ սակաս զոման ի նոցանէ ընտրեալ վիճակին»⁶³: Եվ քանի որ այդ առաջնորդներն ու եպիսկոպոսները մտահոգված չեն որակալ, արժանավոր քահանաներ ընտրելու գործով, ուստի, հաճախ ձեռնադրվում են պատահական հոդագործ կամ հովիկ մարդիկ, որոնք հետագայում դառնում են ծաղր ու ծանակի առարկա. «զի ի հովուական ցայոյ և ի մաճակալութեան գործոյ, և յայլոց անքան արհեստից առնալ... քահանայս կատարեամք»⁶⁴: Այս բոլորի հետևածքով ահա թե ինչ է սասցվում. «վլորութեամբ կորաց առաջնորդնեմք, քահանայս օծեմք... անգիտացեալ տգիտութեամբ յիմարեցու»⁶⁵: Ահա թե ինչու է ընկել հայ եկեղեցու երբեմնի գրավիչ հեղինակությունը, ահա թե ինչու ժողովրդի մեջ թուղացել է հավատը և վաստավությունը հոգևորականների նկատմամբ՝ եզրակացնում է Լամբրոնացին: Այնուհետև,—ավելացնում է մեկնիչը, —քահանաները ոչ միայն տգեսու ու շահաւեր են, այլև անմաքոր: «Պատարագի և ժամասցության ժամանակ չեն զգեստավորվում վայելուց ձևով, աղոթում և Ավետարան են կարդում ծածկած գլխով, ժամասացությունը կատարում են անհետաքրքիր, կիսատպուած, սուս ու սիսալ: Այս քահանաների մեջ կան և

⁵⁸ Անդ, էջ 35:

⁵⁹ Անդ, էջ 40:

⁶⁰ Անդ, էջ 40:

⁶¹ Անդ, էջ 42:

⁶² Անդ, էջ 42:

⁶³ Անդ, էջ 43:

⁶⁴ Անդ, էջ 43:

⁶⁵ Անդ, էջ 45:

այնպիսիները, որոնք ոչ միայն թերու են, այլև թերահավատ, շահամոլ և «միայն մորթով ոչխարաց պատրեն»⁶⁶: Ուշագրավ է, որ այս դիտողություններից հետո, երկախոսությամբ ինքը՝ մեկնիշը և ուն կրոնակիր Հռկնանես անունով, հարց ու պատասխանի միջոցով, ավելի կոնկրետ և ավելի հետաքրքիր ձևություն հայ եկեղեցու գոյություն ունեցող զանցանքներն ու բացերը՝ տգես և թերահավատ քահանաների սխալ գործունեության հետևանքով։ Լամբրունացին այնքան է դառնացած վերևուն հիշված թերությունների պատճառով, որ հոգված բացականչում է։ «Եկ, Երեմիա, ցաւակից մարգարէ, և վշակցելով ուրա զբեկուն իմ և ծողովդեռան իմոյ»⁶⁷:

Իսկ ինչպիսին պետք է լինի քահանան ըստ Լամբրունացու։ Ամենից առաջ նա պիտի լինի գիտակից և բարեպաշտ, օրինակելի վարը ու բարբուզ, հավատով։ Ժամերգության ժամանակ պիտի զգեստավորվի մաքուր և վայելու։ Եթե արեղային մեկնիշը նմանեցնում է երկրագործի, ապա քահանային համամատում է թագավորի հետ և առաջ ինչո՞ւ՝ «քանիզ որպէս մեծ է թագաւորութիւն քան գերկրագործութիւն, այդպէս մեծ է քահանայութիւն քան զարեղայութիւն, և որպէս նման բազմապատիկ հմաստութիւն պիտոյ լ' որ թագաւոր է, և զայլոց օգուտն տնօրինե, այդպէս է երիցուն, ես սրբութեան պիտոյ է և իմաստութիւն»⁶⁸։ Բացի այդ, քահանան պիտի անձնուրաց ծառայի իր սուրբ գործին, նա միշտ պետք է նկատի ունենա ծողովորդի մասնական հոգենիան շահելը և երբեք դրանց շվենախ։ Նա պարտավոր է իմանալ «զառակելութիւն իրաքանչիր գործոցն, զոր կատարէ և ըստ որում երկրագործին սխալանք՝ անձին միայն վը-

նասէ, իսկ թագաւորին՝ ամենապն աշխարհին, այսպէս սխալանք արեղային փոքր է առ քահանացին»⁶⁹։ Լամբրունացին սուկ քրիստոնոյի դերում չի հանդես գալիս։ Նա չի գրադիւն միայն աղաքնականաստությամբ, այլ այդ ամենի մեջ մեղալոր է համարուն նաև իրեն՝ և որպէս եպիսկոպոս, և որպէս Տարտոնի թեմի առաջնորդ՝ «քանիզ իմ է եղբօրն վերն և բժշկութիւնն»⁷⁰։ Պաշտպանելով հայ առաքեական եկեղեցու ավանդական, ազգային նկարագիրը, նա պահպանողական ազգային սխալարձ չէ։ Հայ եկեղեցին նա երբեք կորված ու անշատ չի համարուն մուս բոյր եկեղեցիներից։ Լամբրունացին մի կողմից պահպանում է նախակիների դրած եկեղեցական օրենքները, ախտան է ազգային եկեղեցու, մուս կողմից անշրջես չի դնում քրիստոնա մուս ազգերի եկեղեցիների միջն, չի անտեսում դրանց նմանությունները, փոխազդեցություններն ու ընդհանությունը։ Ավելին. նա դեմ է ոչ միայն անհիմն ավանդության, այլև խարազանում է սխալարծությունը սևական այն բանից, թե այդ սխալարձ աչառուն որ ազգին է պատկանում։ «Ես ասեմ զայր և ոչ քնակ, թէ՝ մեր միայն Քրիստոսի ծողովուրդք»։ Նշանակում է՝ դավանարանական վեճերը, ծիսական որոշ տարրերությունները իրավունք չեն տալիս մի ազգի կրոնավորներին վարկարեկելու մի որիշ ազգի եկեղեցինու հրա ազգային սխանությունները Բոյրը ազգերի եկեղեցիներն էլ պետք է համերաշխ գործեն, իսկ որպէսզի այդ համերաշխությունն ու փոխադարձ հարգանքը տևական լինի, եղրակացնում է Լամբրունացին՝ «վասն այսորիկ պարտ է մեզ հարցն սրբոց բարեկարգութեանց հետեւել...»⁷¹։

⁶⁶ Անդ, էջ 48:


⁶⁷ Անդ, էջ 47:

⁶⁸ Անդ, էջ 53:

⁶⁹ Անդ, էջ 58:

⁷⁰ Անդ, էջ 47:

⁷¹ Անդ, էջ 53:





Ը. ԵԳԱՆՅԱՆ

(Զետագրատուան զիսավոր ավանդապահ)

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Անցյալի կրոնական, կրթական և ազգային հաստատություններից շատերի հնան Էջմիածնի Գևորգյան ճեմարանը ևս ունեցել է հայերեն ձեռագրերի իր սեփական հավաքածուն, որը սկզբնավորվել է 1874 թվականին ճեմարանի հիմնադրման հետ միաժամանակ, և, ըստ պահպանված ցուցակի, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Գևորգյան հոգեուր ճեմարանի»,¹ 1907 թվականին արդեն ամփոփում էր ԺԴ—ԺԹ դարերում ընդորինակված 56 գրչագիր մատյաններ:

Գևորգյան ճեմարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն (որը որպես այդպիսի բանասիրությանը թիւ է հայտնի), ինչպես ցույց են տալիս ձեռագրերի կրո պահպանված ընծայական մակագրությունները, կազմվել է 1874—1907 թվականների ընթացքում ճեմարանի սաների, դասախուների և քարեկամների նվիրաբերություններով, որոնցից շատերը՝ ստացվել են 1899 թվականին, ճեմարանի 25-ամյա հորելյանի առջիվ։

Հավաքածուն իր գոյությունը պահպանվել է մինչև 1907 թվականի մայիսի 18-ը, որից հետո Մեսրոպ Վարդապետ Տեր-Մովսիսյանի շահերով տեղափոխվել է Էջմիածնի Մատենադարան և մուծվել Մատենադարանի «Գևորգյան» կոչող հավաքածուի մեջ։ Այդ մասին Մեսրոպ Վարդապետ Տեր-Մովսիսյանը հետևյալն է արձանագրել «Գևորգյան» հավաքածուի գոյքամատյանում։ «1907 թ. մայիսի 18-ին Գևորգյան ճեմարանից Մայր Աթոռի Մատե-

նադարան թերեցի հետևյալ ձեռագրերը... Տեսուչ Մատենադարանի Մեսրոպ Վ[ա]րդապետ»²:

